Ճանաչի՛ր ինքդ քեզ

Կրթություն

Շաբաթաթերթ «Krtutiun» (education) weekly «Кртутюн» (образование) еженедельник 06.10.2021թ. չորեքշաբթի թիվ 40-41 (1013-1014)

Շնորհավո՛ր տոնդ, Ուսուցի՛չ

Մի բուռ Աստված

«Երկրորդ ծնող», «մտքի ճարտարապետ», «հոգու բժիշկ», «Ուսուցիչ ծնվում են, ոչ թե դառնում», «ամենավեհ կոչումը», «ամենավսեմ առաքելությունը» եւ այլն, եւ այլն... Ուսուցչին բնութագրող բազում արտահայտություններ կան, սակայն դրանք դույզնինչ չեն սպառում **Ուսուցիչ** երեւույթի էությունը: Ամենաչար ու համառ մարդն անգամ երբեւէ մի բարի խորհրդի ականջալուր-հնազանդ է լինում, ամենածույլ մարդն անգամ երբեւէ մի դաս սովորում է ու, որքան էլ երախտամոռ լինի, հիշում է այդ խորհուրդ-դասը տվողին... Ուրեմն, մենք՝ սովորական մահկանացուներս, որքա՜ն առավել գնահատում, հարգում ու սիրում ենք մեզ **գիտելիք** ու **վարք** տվողներին, մեզ դեպի **ճշմարտություն** ու **լույս** առաջնորդողներին...

...*Բազում են կոչյալք, սակայն սակավ են ընտրյալք*՝ ասում է **Աստվածաշունչը**: *Դո՛ւք եք աշխարհի աղը,* ասում է **Աստված**, գնացե՛ք եւ քարոզե՛ք, Աստծո **խոսքը** հասցրե՛ք ժողովուրդներին, հոգու **լույսը**՝ մարդկանց... Ուսուցիչներ էին **առաքյալները,** ուսուցիչ էր եւ ինքը՝ **Հիսուս Քրիստոսը**: Ասել է թե՝ ուսուցչին բնութագրելիս կարող ենք նրան կոչել նաեւ **մի բուռ Աստված:**

Վերամբարձ ստացվեց: Ների՛ր եւ մի՛ մեղադրիր: Գիտեմ՝ Դու այս օրերին անձնապես ուրախ ես, անշուշտ, բայց նաեւ անասելի տխուր՝ ինչպես ամենքս վերջին մեկ տարում...

Ծանոթ եմ Քո խոհերին: Հոգսերդ, կարիքներդ, հիասթափություններդ, երազանքներիդ ու իրականության միջեւ ալեբախումներդ հասկանալի են եւ ընդունելի: Պատկերացնում եմ, ու Դու էլ հիշում ես, երբ պատանի էիր կամ դեռատի մի աղջնակ, ծնողներիդ հորդորով, գերդաստանիդ ավանդույթներին հավատարիմ մնալու գիտակցությամբ, թե սիրելի ուսուցչիդ օրինակով՝ որոշեցիր ուսուցիչ դառնալ: Բուհում ունեցար սիրելի դասախոսներ, բայց այնտեղ ապրեցիր առաջին հիասթափությունդ. չէ՞ որ բոլորը չէ, որ ազնիվ էին ու գիտակ: Հետո սկսեցիր աշխատել: Ժամանակները փոխարինեցին մեկը մյուսին, բայց այդպես էլ կյանքը Քեզ չգոհացրեց: Եղավ պահ, երբ իշխանությունն ու հարստությունը Քեզ ճնշեցին, ու Դու ստիպված էիր ենթարկվել տգետին, զիջել անազնիվին: Ապրեցիր երկրորդ, երրորդ հիասթափություններդ ու տարիների հետ հասկացար, որ, այո՛, *«ինչ որ մի տեղ, ինչ որ մի բան սխալ է»* հաստատ: Վիլյամ Սարոյանի խոսքն է: Բայց նույն բարի հսկան կրկնում էր հաճախ՝ *փնտրի՛ր բարին ամենուրեք ու երբ գտնես, հանի՛ր նրան թաքստոցից, թող շողշողա իր ողջ փայլով...*

Դու հիմա ինձ էլ ես մեղադրում... Չէ՛, էժանագին քարոզ չէ, որ մատուցում եմ Քեզ: Պարզապես ուզում եմ, որ հավատաս, որ ես Քեզ իրոք գնահատում եմ ու նաեւ վստահ եմ, որ Դու չես փոխվել, մնացել ես նույնը: Ոչ մի ժամանակ ու իրականություն, ոչ մի հասարակարգ ու կացութաձեւ Քեզ չեն կարող փոխել... որովհետեւ Դու **Ուսուցիչ** ես... Այսինքն՝ մի բուռ **Աստված:** Քո վարձքը Դու պիտի ստանաս նախ Երկրի վրա, ապա՝ Երկնքում: Ու եթե այն անբավարար թվա քեզ այս կյանքում (չի եղել որեւէ ժամանակ, որ այն բավարար լիներ), Դու մի՛ նեղսրտիր ու մի՛ մեղադրիր որեւէ մեկին: Չէ՞ որ **Աստված** բոլորիս հավասարաչափ է սիրում, բայց տարբեր *շնորհներ* ու տարբեր *ճակատագրեր* է պարգեւում մեզ... Ու եթե որեւէ մեկին մեղադրելու լինես, հիշի՛ր՝ բոլորը չէ, որ ունեն Քո մտածողության սահմանները... Հիշի՛ր ու մի՛ մեղադրիր...

Ո՞րն է հոգեպես ավելի ազնիվ. պայքարե՞լ չարի դեմ, թե՞ բարիք ստեղծել... էլի վերամբարձ հնչեց, բայց Դու ների՛ր ու հավատա՝ Քո կոչումը, Քո անելիքը, Քո գործը հենց բարիք ստեղծելն է, որ կա: Դու Քո բաժին գո՛րծն արա ու Քո Խաչը կրի՛ր անտրտունջ, որ **Աստծո** առաջ, ժողովրդիդ առաջ, սաներիդ առաջ խիղճդ լինի մաքուր, ու *գործդ միշտ ավելին լինի, քան վարձքդ երկրի վրա...* Քո կոչումն է, Քո ճակատագիրը, Քո Խաչը. չէ՞ որ Դու **Ուսուցիչ** ես, մի բուռ **Աստված:**

Արդ, շնորհավո՛ր տոնդ, **Ուսուցի՛չ,** շնորհավո՛ր տոնդ, մի բուռ **Աստված:**

Գ.Մ.

Շնորհավորանքի խոսք

Հարգելի՛ ուսուցիչներ,

Շնորհավորում եմ ձեզ՝ մասնագիտական տոնի կապակցությամբ: Դուք արժանի եք անընդհատ մեծարանքի, հարգանքի եւ ուշադրության: Ձեր անձնվեր աշխատանքի շնորհիվ հայ երեխաները կրթվում ու դաստիարակվում են որպես նվիրյալ հայրենասերներ, ովքեր չխնայեցին իրենց կյանքը արցախյան պատերազմի ժամանակ... Դուք եք աշակերտներին հաղորդակից դարձնում գիտության, մշակույթի գաղտնիքներին, եւ աշխարհով սփռված ձեր աշակերտներն են դառնում գիտնականներ, մշակույթի ու արվեստի գործիչներ ու բարձր պահում հայ ազգի պատիվը: Անուրանալի եւ անգնահատելի է ձեր դերը հայ ազգի գոյատեւման պայքարում, հային հայ պահպանելու գործում: Համավարակը ավելի բացահայտեց ձեր հմտություններն ու նվիրվածությունը դժվարին աշխատանքում:

Մաղթում եմ ձեզ առողջություն, անսահման համբերություն ու սեր, բարեկեցություն ու հոգեկան անդորր:

Գրիգոր ՂԱՐԻԲՅԱՆ
ՀՀ ԿԳ Աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ծյուղային հանրապետական միության նախագահ

ՀՀ նախագահ Արմեն ՍԱՐԳՍՅԱՆԻ շնորհավորական ուղերձը՝ Ուսուցչի օրվա առթիվ

Սիրելի՛ ուսուցիչներ,

Այսօր նշում ենք ձեր մասնագիտական տոնը՝ Ուսուցչի օրը:

Նշում ենք բարդ ժամանակներում, մտահոգիչ ու ուժերի գերլարում պահանջող իրավիճակում, երբ ոչ միայն մեր հնարավորություններն ու ուժերը համատեղելու, մեր փորձն ու գիտելիքը ներդնելու, այլեւ նորովի սովորելու եւ սովորեցնելու կարիք ունենք՝ երբեք չզլանալով աշակերտ լինել եւ սովորել Ուսուցչից՝ այդ բառերի ամենալայն իմաստով:

Մենք, որպես ժողովուրդ, շատ լավ գիտենք ուսուցչի տեղը մեր արժեքային համակարգում: Պետականությունը ծնվում եւ ապրում է նաեւ կրթության շնորհիվ, որ նույնն է՝ կրթված անհատի, կրթված հասարակության, կրթված ժողովրդի շնորհիվ: Այն ժամանակներում, երբ չենք ունեցել պետականություն, ուսուցիչն է հոգեւորականի հետ միասին մեր մեջ վառ պահել Հայրենիքի, Հավատի ու Լեզվի, ասել է թե՝ մեր ինքնության լույսը:

Մեր կյանքի ընթացքում մենք միշտ ունենում ենք ուսուցիչներ՝ ընտանիքում, թե՛ դպրոցում, մեր շրջապատում, թե՛ աշխատավայրում: Այս կամ այն կերպ նրանք մեզ սովորեցնում են ապրել ու սիրել, գթալ ու ներել, պայքարել ու հաղթել, լինել ուժեղ, լինել իմաստուն ու կիրթ, ձեռք բերել գիտելիք ու փորձ: Նրանցից մեկը մեզ սովորեցնում է պաշտպանել ու պահպանել Հայրենիքը եւ ազգային արժեքները, մյուսը՝ խիզախ ու հաստատակամ լինել, երրորդը՝ աշխատել ու ստեղծել, չորրորդը՝ երջանիկ ու կարեկից լինել, հինգերորդը...

Նրանք բոլորը սովորաբար ամբողջանում են մեկ՝ Ուսուցչի կերպարի մեջ...

Դպրոցն այն մեկնարկային կետն է, որտեղից, ինչպես եւ ընտանիքից, սկսվում է մեր ինքնության գիտակցումը՝ շնորհիվ մեր ծնողների, մեր ուսուցիչների, որոնք հաճախ են տարբեր իրավիճակներում փոխարինում միմյանց: Ասել է թե՝ երկրի ապագան սկսվում է ուսուցչից, նրա տված դաստիարակությունից ու գիտելիքից, մեզ փոխանցվող նրա փորձից ու խորհրդից, որոնք բոլոր ժամանակներում էլ մնում են արժեքավոր ու անհրաժեշտ:

Մենք ապրում ենք մարտահրավերներով լի աշխարհում, երբ ավելի ու ավելի հաճախ են տեղի ունենում անսպասելի, չնախատեսված ու անկանխատեսելի փոփոխություններ, երբ ավելի է մեծանում գիտակից, կրթված ու ստեղծագործ մարդկանց անհրաժեշտությունը, որոնք պետք է ստեղծեն ոչ միայն Հայաստանի ապագան, այլեւ դրանով իսկ մասնակից դառնան աշխարհի վաղվա օրը կառուցելուն:

շարունակությունը՝ էջ 2

ՀՀ նախագահ Արմեն ՍԱՐԳՍՅԱՆԻ շնորհավորական ուղերձը՝ Ուսուցչի օրվա առթիվ

սկիզբը՝ էջ 1

Այսօրվա աշխարհում ուսուցչի դերն այլեւս չի սահմանափակվում գիտելիքի մատուցմամբ: Պետք է կարողանալ առավելագույն խորությամբ ըմբռնել երկրում, հասարակության մեջ, աշխարհում տեղի ունեցող փոփոխությունների էությունը: Մենք կարող ենք կառուցել դպրոց, համալսարան, բայց առանց որակյալ ուսուցչի՝ չի կարող որակյալ արդյունք լինել:

Պետք է ստեղծել բոլոր պայմանները, որ դուք, հարգելի՛ ուսուցիչներ, հնարավորություն ունենաք ոչ միայն արժանի քաղաքացիներ կրթել, այլեւ կատարելագործել ձեր հմտությունները, զարգացնել գիտելիքները, որպեսզի միասին՝ դուք, ձեր ընտանիքներն ու ձեր աշակերտները, նրանց ծնողներն ու հարազատները, մենք բոլորս կարողանանք ապրել ուժեղ, բարեկեցիկ, անվտանգ եւ առողջ երկրում:

Սիրելի՛ ուսուցիչներ,

Մեզանից յուրաքանչյուրը եղել է աշակերտ դպրոցում. ես ջերմությամբ ու երախտագիտությամբ եմ հիշում իմ ուսուցիչներին:

Մեզանից յուրաքանչյուրը շարունակում է աշակերտ մնալ: Ես շնորհակալ եմ ինչպես դպրոցի իմ ուսուցիչներին, այնպես էլ բոլոր այն մարդկանց, որոնցից ես ինչ-որ մի բան եմ սովորել ու շարունակում եմ սովորել:

Բոլորիդ մաղթում եմ, որ ձեր աշակերտները ողջ կյանքում հարգանքով ու սիրով հիշեն ձեզ:

Մաղթում եմ բոլորիդ առողջություն, բարեկեցություն եւ ամենայն բարիք:

Մայր Աթոռ

Վեհափառն ընդունեց Բուենոս Այրեսի ՀԲԸՄ վարժարանի սաներին



Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում հյուրընկալեց Բուենոս Այրեսի (Արգենտինա) Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության վարժարանի ավարտական լսարանի սաներին՝ ուղեկցությամբ ՀԲԸՄ հոգաբարձուների խորհրդի անդամ **Խուան Բալյանի:**

Վեհափառ Հայրապետը, իր հայրական օրհնությունը բաշխելով պատանի հայորդիներին, ուրախությամբ արձանագրեց, որ տարիներ առաջ ձեւավորված վարժարանի ավարտական լսարանների Հայաստան եւ Մայր Աթոռ այցելության ավանդույթը այժմ վերականգնվել է: Այս առիթով Նորին Սրբությունը պատգամեց շրջանավարտներին ջանասիրությամբ շարունակել իրենց ուսումը, որպեսզի ձեռք բերած գիտելիքներն ու հմտությունները ծառայեցնեն արգենտինահայ համայնքի առավել աշխուժացմանը եւ հայրենիքի հզորացմանը:

Հանդիպմանը Հայոց Հովվապետը գուհունակությամբ արձանագրեց, որ արգենտինահայ գաղութն աչքի է ընկում առանձնահատուկ կազմակերպվածությամբ, հայ կյանքի եւ ազգային արժեքների նախանձախնդիր պահպանմամբ, ինչի ականատեսն ու վկան է եղել Արգենտինա կատարած իր հովվապետական այցելությունների ժամանակ:

Վեհափառ Հայրապետը նաեւ պատասխանեց երիտասարդների հարցերին: Արգենտինահայ պատանիները, մասնավորապես, հետաքրքրվում էին, թե ինչպես է Նորին Սրբությունն ընտրել հոգեւորականի ուղին եւ ներկայումս ինչպիսին է հովվապետական ծառայությունը:

Վերջում Նորին Սրբությունն ուխտավոր հայորդիներին մաղթեց Աստծո զորկացությունն ու պահպանությունը:

Կառավարությունում

Կպարգեւատրվեն լավագույն մանկավարժները

ՀՀ կառավարության նիստում որոշում է կայացվել կատարել բյուջեի վերաբաշխում՝ ***«Ուսուցչի օրվա»*** առթիվ հանրակրթական ուսումնական հաստատությունների լավագույն մանկավարժներին պարգեւատրելու նպատակով:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության կողմից իրականացվող ***«Տարվա լավագույնները»*** մրցույթի նպատակն է խրախուսել հանրակրթական եւ նախադպրոցական ուսումնական հաստատությունների մասնագիտական խորը պատրաստվածություն ցուցաբերած, ստեղծագործական աշխատանք կատարող մանկավարժներին, տնօրեններին եւ ուսումնաօժանդակ անձնակազմի աշխատակիցներին, նպաստել նրանց կողմից նոր նախագծերի իրականացմանը, տարածել նրանց առաջավոր փորձը, նպաստել հասարակության շրջանում նրանց հեղինակության բարձրացմանը:

Մրցույթին կարող են մասնակցել հանրակրթական եւ նախադպրոցական ուսումնական հաստատությունների

1. ուսուցիչները եւ դաստիարակները,

2. տնօրենները,

3. ուսումնաօժանդակ կազմի աշխատակիցները:

Մրցույթը կազմակերպվում է հետեւյալ առանձին անվանակարգերով.

1) հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչական լավագույն ծրագրի կամ նախաձեռնության համար,

2) հանրակրթական ուսումնական հաստատության կառավարման լավագույն ծրագրի կամ նախաձեռնության համար,

3) հանրակրթական ուսումնական հաստատության ուսումնաօժանդակ գործունեության լավագույն ծրագրի համար,

4) նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական լավագույն ծրագրի կամ նախաձեռնության համար,

5) նախադպրոցական ուսումնական հաստատության կառավարման լավագույն ծրագրի կամ նախաձեռնության համար,

6) նախադպրոցական ուսումնական հաստատության ուսումնաօժանդակ գործունեության լավագույն ծրագրի համար:

Մրցույթի մասնակիցը պետք է ունենա տվյալ ուղղությամբ առնվազն 2 տարվա գործունեության փորձ:

Մրցույթին կարող է ներկայացվել ինչպես անհատական ծրագիր առանձին մասնակցի, այնպես էլ համատեղ ծրագիր մասնակիցների խմբի կողմից՝ բաղկացած առավելագույնը 3 անդամից: Խմբային հայտի դեպքում կարող են ներառված լինել ինչպես միեւնույն, այնպես էլ տարբեր ուսումնական հաստատությունների ներկայացուցիչներ:

Ծրագրային առաջարկները դասակարգվում եւ գնահատվում են՝ ըստ մասնակիցների տարբեր խմբերի եւ անվանակարգերի:

Ծրագրային առաջարկների գնահատման չափանիշներն են.

համապատասխանությունը ծրագրին ներկայացված պահանջներին, ծրագրային առաջարկի հիմնավորվածությունը, իրատեսականությունը եւ շարունակականությունը:

Ծրագրային առաջարկը գնահատվում է հարյուր միավորային համակարգով՝ ըստ վերոնշյալ չափանիշների (համապատասխանությունը՝ առավելագույնը 10 միավոր, հիմնավորվածությունը՝ 30 միավոր, իրատեսականությունը՝ 30 միավոր եւ շարունակականությունը՝ 30 միավոր):

«Տարվա լավագույնները» մրցույթի արդյունքում նախատեսվում է դրամական պարգեւի տեսքով խրախուսել շուրջ 22 ծրագիր, անհատական ծրագրերի դեպքում՝ առավելագույնը հինգ հարյուր հազար ՀՀ դրամ (ներառյալ հարկերը եւ տուրքերը), խմբային (երկու կամ երեք մասնակից) ծրագրերի դեպքում՝ առավելագույնը մեկ միլիոն ՀՀ դրամ (պարգեւատրման չափը կարող է փոփոխվել՝ ներկայացված ծրագրերի եւ դրանց գնահատման արդյունքներից կախված): Մասնակցի (կամ խմբի) կողմից ներկայացվող ծրագրային առաջարկը կարող է ներկայացվել միայն մեկ անվանակարգում:

Հիշեցնենք, որ նախորդ տարի ներկայացվել է 54 ծրագիր, պարգեւատրվել են շուրջ 40 ծրագրեր՝ թե՛ խմբային, թե՛ անհատական: Նշենք, որ 2020 թվականին *«Տարվա լավագույնները»* մրցույթի շրջանակում ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը 58 մանկավարժի պարգեւատրել է դյուրակիր համակարգիչներով: Նախարարությունը նպատակահարմար է գտել 2021 թվականին *«Տարվա լավագույնները»* մրցույթի արդյունքում հաղթող մասնակիցներին տրամադրել դրամական պարգեւ: Դյուրակիր համակարգիչներով պարգեւատրման փոխարինումը դրամական պարգեւով պայմանավորված է մանկավարժներին իրենց աշխատանքի արդյունքում ձեռք բերած պարգեւն առավել նպատակային եւ ըստ անհրաժեշտության տնօրինելու հնարավորություն ընձեռելու իրողությամբ:

Այս տարի ստացվել է շուրջ 300 ծրագրային առաջարկ:

Հեղինե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հաստատվել են պետական նպատակային ծրագրերը

ՀՀ կառավարության նիստում որոշում է կայացվել հաստատել 2022 թվականին իրականացվելիք գիտական եւ գիտատեխնիկական պետական նպատակային ծրագրերը եւ 2022 թվականի պետական բյուջեի նախագծի կազմում սահմանված կարգով ներկայացնել Ազգային ժողով:

Նպատակային ծրագրային ֆինանսավորման են ներկայացվել 8 գիտական ծրագրեր: Ցանկում ներառված են հետեւյալ կազմակերպությունների ներկայացրած նախագծերը՝ *«Մատենադարան» Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ»* հիմնադրամ, ՀՀ ԳԱԱ *«Մ. Գ. Մանվելյանի անվան ընդհանուր եւ անօրգանական քիմիայի ինստիտուտ»*, ՀՀ ԳԱԱ *«Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ»*, ՀՀ ԳԱԱ *«Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն»*, ՀՀ ԳԱԱ *«Կենդանաբանության եւ հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն»*, ՀՀ ԳԱԱ *«Բ. Նալբանդյանի անվան քիմիական ֆիզիկայի ինստիտուտ»*, ՀՀ ԳԱԱ *«Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտ»* եւ ՀՀ ԳԱԱ *«Ինֆորմատիկայի եւ ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ»*:

Գիտական-գիտատեխնիկական նպատակային ծրագրային հետազոտություններ իրականացնելու ընդհանուր գումարը կազմում է շուրջ 136 մլն:

***

ՀՀ կառավարության նիստում որոշում է կայացվել ԿԳՄՍ նախարարության 2021 թ.ի բյուջեով նախատեսված ծրագրերից կատարել վերաբաշխում՝ **շուրջ 15,6 մլն դրամի չափով:** Ուսումնական գործընթացի պատշաճ կազմակերպման նպատակով 14,3 մլն դրամը կհատկացվի **Եղվարդի թիվ 1 ավագ դպրոցին՝** սանհանգույցների եւ դասասենյակների մանրահատակի վերանորոգման համար, իսկ 1,3 մլն դրամը՝ **Երեւանի Ա. Երզնկյանի թիվ 118 ավագ դպրոցին՝** անհրաժեշտ գույքի ձեռքբերման համար:

Համաձայն հիմնավորման՝ Եղվարդի թիվ 1 ավագ դպրոցում վերանորոգման մի շարք աշխատանքների կատարման հրատապություն կա: Առկա է դասասենյակների պակաս, մի շարք դասասենյակներ չունեն համապատասխան կահավորում: Սանհանգույցները եւս վատ վիճակում են եւ բացարձակապես հարմարեցված չեն դպրոցում կրթության առանձնահատուկ կարիքներ ունեցող երեխաների պահանջներին:

Երեւանի Ա. Երզնկյանի թիվ 118 ավագ դպրոցի սովորողների թվի ավելացման հետեւանքով՝ անհրաժեշտություն է առաջացել ուսումնական գործընթացը կազմակերպել երկրորդ մասնաշենքում, որտեղ առկա է համապատասխան գույքի ձեռքբերման անհրաժեշտություն:

Նշենք, որ ընունված որոշումը բխում է ՀՀ կառավարության՝ 2021-2026 թթ. ծրագրից, որով նախատեսվում է մինչեւ 2026 թվականը կառուցել, հիմնանորոգել կամ վերանորոգել առնվազն 300 դպրոց:

Ուսուցչի օրվա կապակցությամբ

Մի խումբ մանկավարժներ արժանացել են ԿԳՄՍՆ պարգեւների

«Հայաստանի Հանրապետության տոների եւ հիշատակի օրերի մասին» ՀՀ օրենքով **հոկտեմբերի 5-ը** նշվում է որպես ***«Ուսուցչի օր»***:

Սովորողների կրթության ու դաստիարակության գործում եւ մանկավարժության բնագավառում ունեցած բազմամյա ու նշանակալի ավանդի համար Ուսուցչի օրվա կապակցությամբ մի խումբ մանկավարժներ ԿԳՄՍ նախարար **Վահրամ Դումանյանի** հրամանով պարգեւատրվել են նախարարության պարգեւներով:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության մեդալով պարգեւատրվել են.

- ***Անահիտ Արտուշի Մկրտչյան*** *- Երեւանի Շեւչենկոյի անվան թիվ 42 ավագ դպրոցի հայոց լեզվի ուսուցիչ*
- ***Խաչատուր Հրաչի Խաչատրյան*** *- Երեւանի Համո Սահյանի անվան թիվ 70 հիմնական դպրոցի ՆԶՊ-ի ուսուցիչ*
- ***Նիկոլայ Ավետիսի Ավանեսյան*** *- Երեւանի թիվ 108 միջնակարգ դպրոցի ՆԶՊ-ի ուսուցիչ*
- ***Ռիտա Ասլանի Պետրոսյան*** *- Գեղարքունիքի մարզի Սոթքի միջնակարգ դպրոցի դասվար*
- ***Ռիտա Վաղինակի Բարսեղյան*** *- Գեղարքունիքի մարզի Կութի միջնակարգ դպրոցի ուսուցիչ*
- ***Սուրեն Ալեքսանդրի Կարապետյան*** *- Կոտայքի մարզի Աբովյանի թիվ 2 հիմնական դպրոցի ՆԶՊ-ի ուսուցիչ*
- ***Անահիտ Աշոտի Իշխանյան*** *- Սյունիքի մարզի Խնձորեսկի միջնակարգ դպրոցի ֆիզիկայի ուսուցիչ*
- ***Ռուզաննա Ժորայի Հովակիմյան*** *- Սյունիքի մարզի Գորայքի միջնակարգ դպրոցի մաթեմատիկայի ուսուցիչ*

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության պատվոգրով պարգեւատրվել են.

- ***Տաթեւիկ Սերյոժայի Աբրահամյան*** *- Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի թիվ 57 հիմն. դպրոցի դասվար*
- ***Ելիզավետա Գրիգորի Օհանջանյան*** *- Արարատի մարզի Մասիս քաղաքի Վ. Բաբայանի անվան թիվ 2 հիմն. դպրոցի դասվար*
- ***Մարգարիտ Վարդկեսի Ներսիսյան*** *- Արարատի մարզի Շահումյանի Արտակ Համբարձումյանի անվան միջն. դպրոցի մաթեմատիկայի ուսուցիչ*
- ***Անի Հարությունի Մկրտչյան*** *- Արմավիրի մարզի Վաղարշապատի Խ. Աբովյանի անվան թիվ 4 հիմն. դպրոցի կենսաբանության ուսուցիչ*
- ***Նունուֆար Ծերունի Առաքելյան*** *- Արագածոտնի մարզի Արագածի թիվ 2 միջն. դպրոցի ֆրանսերենի ուսուցիչ*
- ***Անահիտ Ռոմիկի Ալավերդյան*** *- Կոտայքի մարզի Հրազդանի Ա. Իսահակյանի անվան թիվ 9 հիմն. դպրոցի անգլերենի ուսուցիչ*
- ***Գայանե Կառլենի Սարգսյան*** *- Սյունիքի մարզի Ագարակի միջն. դպրոցի անգլերենի ուսուցիչ*
- ***Սուսաննա Գեւորգի Սիմոնյան*** *- Շիրակի մարզի Գյումրու թիվ 7 հիմն. դպրոցի ֆիզիկայի ուսուցիչ*
- ***Անահիտ Ավետիքի Կարապետյան*** *- Շիրակի մարզի Ջրափիի միջն. դպրոցի կենսաբանության ուսուցիչ*
- ***Մարիամ Հայկի Ղազարյան*** *- Վայոց ձորի մարզի Արփիի միջն. դպրոցի գերմաներենի ուսուցիչ*
- ***Մարգարիտ Ալեքսանի Կարապետյան*** *- Վայոց ձորի մարզի Մալիշկայի թիվ 1 միջն. դպրոցի դասվար*
- ***Ռուբիկ Աշոտի Մարտիրոսյան*** *- Տավուշի մարզի Արճիսի միջն. դպրոցի հայոց եկեղեցու պատմության ուսուցիչ, Պտղավանի միջն. դպրոցի աշխարհագրության եւ հայոց եկեղեցու պատմ. ուսուցիչ*
- ***Արեւ Բենիկի Չոբանյան*** *- Տավուշի մարզ Այգեհովիտի միջն. դպրոցի հայոց լեզվի եւ գրականության ուսուցիչ*
- ***Սիրուն Ժորիկի Հովհաննիսյան*** *- Լոռու մարզի Տաշիրի թիվ 1 հիմն. դպրոցի մաթեմատիկայի ուսուցիչ*
- ***Անահիտ Վահանի Աբրահամյան*** *- Լոռու մարզի Վանաձորի Հ. Թումանյանի անվան թիվ 3 հիմն. դպրոցի հայոց լեզվի եւ գրականության ուսուցիչ*

ՀՀ ԿԳՄՍ նախարար Վահրամ ԴՈՒՄԱՆՅԱՆԻ շնորհավորական ուղերձը՝ Ուսուցչի օրվա առթիվ

Սիրելի՛ ուսուցիչներ,

Ջերմորեն եւ երախտագիտությամբ շնորհավորում եմ ձեզ՝ Ուսուցչի տոնի կապակցությամբ: Այս տոնը կոչված է առանձնակի կարեւորելու եւ ընդգծելու ձեր վճռորոշ դերն ու պատասխանատվությունը թե՛ յուրաքանչյուր աշակերտի՝ որպես բազմակողմանի զարգացած, հայրենանվեր անհատ, թե՛ բարձրարժեք հատկանիշներով օժտված հասարակություն ձեւավորելու գործում:

Ուսուցչի օրը չի սահմանափակվում այս տոնով. այն սկսվում է յուրաքանչյուր առավոտ՝ դասասենյակից եւ աշակերտական նստարանից: Ձեր գործը վարձահատույց է լինում ապագայով, կայուն ու անվտանգ պետության տեսլականի իրագործմամբ, հայրենիքի բարօրությամբ:

Շնորհակալ ու երախտապարտ եմ ձեզ՝ ձեր բարդ ու միաժամանակ պատվաբեր աշխատանքի համար: Ձեզնով է պետության հիմքն ամուր, ձեզնով է վաղվա օրը որոշիչ: Ձեր դաստիարակած սերունդն էր, որ 44 օր շարունակ չերկնչեց ու անձնազոհաբար պաշտպանեց հող հայրենին՝ վառ պահելով հայրենասիրական ոգին:

Սիրելի՛ մանկավարժներ, ուզում եմ՝ վստահ լինեք, որ պետությունը ձեր կողքին է, ձեր աջակիցն է, եւ ընթացիկ բարեփոխումները միտված են բարելավելու ձեր աշխատանքային գործունեությունն ու միջավայրը՝ ձեզ արժանի գնահատանքով:

Յուրաքանչյուրիդ մաղթում եմ բարօրություն, քաջառողջություն, աշխատանքում՝ ինքնաբավություն, կրկնակի ուժ ու եռանդ: Մեր անելիքը շատ է, կամքը՝ ամրակուռ:

Աստված պահապան բոլորիս…

Մասնագիտական կրթություն եւ ուսուցում

Փոփոխվել է տնօրենի ընտրության կարգը

ՀՀ կառավարության նիստում գործադիրը որոշում է կայացրել փոփոխություններ կատարել նախնական մասնագիտական (արհեստագործական) եւ միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության կարգում: Որոշման ընդունմամբ առավել հստակեցվել են տնօրենի ընտրության կազմակերպման եւ անցկացման աշխատանքները, որը հնարավորություն կընձեռի խորհրդին ընտրել մեկ հավակնորդ եւ խուսափել հետագա շահարկումներից: Բացի այդ՝ տնօրենի ընտրության կազմակերպչական աշխատանքները կկազմակերպվեն ավելի դյուրին, իսկ ընտրությունը՝ առավել արդարացի:

Տնօրենի ընտրության կարգն ամբողջության խմբագրվել է, եւ հիմնականում կատարվել են հետեւյալ փոփոխությունները, մասնավորապես.

- Տնօրենի թափուր տեղի մրցույթի հայտարարման կազմակերպչական աշխատանքները սկսելու համար սահմանվել են նոր ժամկետներ՝ պայմանագրի ժամկետը լրանալուց երեք ամիս առաջ, ինչը հնարավորություն կընձեռի մինչեւ թափուր տեղ առաջանալն ընտրել նոր տնօրեն եւ խուսափել ժամանակավոր պաշտոնակատար նշանակելու հանգամանքից: Այլ պատճառներով տնօրենի թափուր տեղ առաջանալու դեպքում նոր կարգով երեք ամսվա ընթացքում հայտարարվում է մրցույթ:

- Կարգով հավակնորդների գործերի ընդունման ժամկետ է սահմանվել 15 աշխատանքային օր, որը կարող է երկարացվել եւս 15 աշխատանքային

օր, եթե հայտարարված ժամկետում հայտեր չեն ներկայացվել (գործող կարգով սահմանված է եղել 30 օր. հավակնորդներ լինելու դեպքում այդ ժամկետը շատ երկար էր):

- Որոշմամբ սահմանվել է հայտարարության ձեւ, որով հստակ նշվում են տնօրենի պաշտոնի թափուր տեղը զբաղեցնելու համար պարտադիր պահանջները եւ անհրաժեշտ փաստաթղթերը: Հիմնական փոփոխությունը կայանում է նրանում, որ հավակնորդը կարող է փաստաթղթերը ներկայացնել նաեւ էլեկտրոնային եղանակով, ինչպես նաեւ հնարավորություն է ընձեռված պակասող փաստաթղթերի առկայության դեպքում դրանք համալրել մինչեւ փաստաթղթերի ընդունման օրը:

- Առավել հստակ են սահմանվել խորհրդի լիազորությունները եւ մրցույթի անցկացման աշխատանքների կազմակերպումը, ինչպես նաեւ լիազոր մարմնի ներկայացուցչի եւ ՁԼՄ-ների մասնակցության ապահովման ու նրանց լիազորությունները:

- Սահմանվել է նաեւ, որ հավակնորդները խորհրդին են ներկայացնում ուսումնական հաստատության 5 տարվա ռազմավարական ծրագիրը, որը մինչ այդ ներկայացվում էր թերություններով, ոչ ռազմավարական ծրագրի ձեւաչափով եւ գործողությունների պլանով: Նախագծում սահմանվել են այն բաղադրիչները եւ պարտադիր քայլերը, որոնք պետք է առկա լինեն ծրագրում:

- Նախագծով սահմանվել է նոր մոտեցում, որ մրցույթի արդյունքում հաղթող է ճանաչվում այն հավակնորդը, ով հավաքել է խորհրդի անդամների ընդհանուր թվի մեծամասնության կողմ ձայները: Գործող կարգով սահմանված է, որ մրցույթի արդյունքում հաղթող է ճանաչվում այն հավակնորդը (հավակնորդները), ով (ովքեր) ստացել է (են) քվեարկությանը մասնակցած խորհրդի անդամների կեսից ավելիի կողմ ձայներ, ինչից բխում էր, որ խորհուրդը կարող է ընտրել մեկից ավելի հավակնորդների, եւ այդ դեպքում լիազոր մարմնի ղեկավարն էր ընտրում մրցույթով հաղթած հավակնորդներից մեկին եւ սահմանված կարգով կնքում պայմանագիր: Փոփոխությունով խորհուրդը կընտրի մեկ թեկնածու կամ հաղթող չի ճանաչվի:

- Մրցույթի արդյունքի վերաբերյալ բողոքի առկայության դեպքում առավել հստակեցվել են լիազոր մարմնի ղեկավարի կողմից ստեղծված բողոքարկման հանձնաժողովի աշխատանքների կազմակերպումը եւ այն հիմքերը, որով հանձնաժողովը տալիս է բացասական եզրակացություն:

Հեղինե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Աշխարհի հետ

Կմասնակցի համաշխարհային կրթական շաբաթին

Տ4 գլոբալ կազմակերպությունը, որը մեկ միասնական հարթակում միավորում է աշխարհի բոլոր դպրոցների ուսուցիչներին ու աշակերտներին, արդեն երկրորդ տարին անընդմեջ հոկտեմբեր ամսին կազմակերպում է համաշխարհային կրթական շաբաթ:

Համաշխարհային կրթական շաբաթին մասնակցելու հայտեր են ներկայացրել աշխարհի հազարավոր դպրոցներ, որոնցից ընտրվել են միայն 100-ը: Վանաձորի Դ. Վարուժանի անվան թիվ 16 հիմնական դպրոցը եւս այս տարվա համաշխարհային կրթական շաբաթին մասնակցելու հայտ է ներկայացրել, բավարարել մրցույթի համար սահմանված չափանիշները եւ ընտրվել՝ մասնակցելու կրթական այդ իրադարձությանը:

Լինելով համաշխարհային կրթական շաբաթվա մասնակից առաջին դպրոցը Հայաստանի Հանրապետությունում՝ համաշխարհային կրթական շաբաթվա ընթացքում այն կներկայացնի 2019 թվականին դպրոցում իրականացված ամառային ճամբարի հաջողված փորձը:

Ճամբարում ընդգրկվել են 6-ից 10 տարեկան դպրոցականներ: Երեխաների համար ճամբարը եղել է անվճար: Մանկավարժներն աշխատել են կամավորության սկզբունքով: Ճամբարականների առօրյան սկսվել է առավոտյան ժամը 10:00-ին եւ ավարտվել 14:00-ին: Օրվա ընթացքում նրանց անվճար սնունդ է տրամադրվել ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի կողմից: Սնունդը պատրաստել են երեխաների՝ կամավորության սկզբունքով աշխատող ծնողները: Ճամբարի աշխատանքներին աջակցել են նաեւ միջին դպրոցի մի խումբ աշակերտներ, ովքեր իրենց նախաձեռնությամբ հանդես են եկել որպես ջոկատավարներ: Հանգստի հետ մեկտեղ կազմակերպվել է աշակերտների ոչ ֆորմալ կրթություն, որն էլ լինելու է դպրոցի՝ համաշխարհային կրթական շաբաթին ներկայանալու հիմնական առանցքը:

Համաշխարհային կրթական շաբաթն անցկացվելու է հոկտեմբերի 3-8-ը: Վանաձորի Դ. Վարուժանի անվան թիվ 16 հիմնական դպրոցը կներկայանա հոկտեմբերի 6-ին՝ ժամը 13:00-ին:

Հ. Հ.

Սփիւռք

Վերամուտ եւ Անկախութեան Տօնակատարութիւն

11 Սեպտեմբեր 2021, Շաբաթ օրը խանդավառ եւ տօնական էր Փասատենայի մէջ: Այդ օր իր դռները 55-րդ անգամ բացաւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ շաբաթօրեայ վարժարանը:

Վերամուտի հաւաքոյթը սկսաւ տնօրէն **Նորայր Տատուրեանի** բարի գալուստի խօսքով: Ան շեշտեց 2021-22 տարեշրջանի համար ծրագրուած հանդէս եւ միջոցառումներու ճոխութիւնը եւ ըսաւ, թէ հայապահպանման լաւագոյն ճամբան ազգային ինքնութեան ճանաչումն է ու այդ նպատակով վարժարանը լայն տեղ կը տրամադրէ իր սաներուն ազգային եւ հոգեւոր կրթութիւն տալու ջանքերուն: Ապա ան ներկայացուց ուսուցչական կազմը, ինչպէս նաեւ դպրոցին համար ջանադրաբար աշխատող նախկին սաներու կամաւորական կազմը:

Եկեղեցւոյ բակին մէջ տեղի ունեցած հաւաքոյթի ընթացքին նաեւ խօսք առաւ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ **Սարգիս Աւ. քհնյ. Փեթոյեանը:** Ան շնորհաւորեց ծնողները եւ աշակերտները, ըսելով, թէ անոնք հայեցի դաստիարակութիւնը կը գերադասեն ու հաւատքով կը փութան հայկական վարժարան: Կատարուեցաւ դպրոցական նոր տարեշրջանի յաջողութեան համար Տէրունական աղօթք, ինչպէս նաեւ Հայաստանի քայլերգի միաբերան կատարում:

Աշակերտները ապա ծնողներու եւ հիւրերու ծափահարութեամբ խումբ առ խումբ դասարաններ ուղղուեցաւ, ստանալու համար մտքի լոյս եւ գիտութիւն:

Իսկ 25 Սեպտեմբեր, Շաբաթ օր, շաբաթօրեայ վարժարանի սաները ջերմ ու ներշնչող յայտագիրով մը տօնեցին Հայաստանի Հանրապետութեան հիմնադրութեան 30-ամեակը:

Յայտագիրը, որ ունէր նաեւ դաստիարակչական բնոյթ, սկսաւ Հայաստանի վերանկախացման ճանապարհը եւ Հայկական պետական նշանները ներկայացնող սահիկներու ցուցադրութեամբ: Փոքրիկ աշակերտները հիացումով եւ հպարտութեամբ դիտեցին եռագոյնի, զինանշանի, խորհրդարանի, մայրաքաղաքի լուսանկարները ու պարզ տեղեկութիւններ ստացան անոնց մասին:

Ապա հանդէս եկան Պլեր երկրորդական վարժարանի Հայկական Ճեմարանէ հիւր աշակերտուհիներ, որոնք հայրենասիրական բանաստեղծութիւններ արտասանեցին շաբաթօրեայ վարժարանի փոքրիկներու համար: Հայկական Ճեմարանի պարախումբի անդամ այդ աշակերտուհիները Արա Գեւորգեանի, ինչպէս նաեւ խանդավառ ծափահարութիւններու ընկերակցութեամբ ներկայացուցին Անկախութեան նուիրուած հայրենաշունչ պար մը: Անոնք Շաբաթօրեայ վարժարանի մանուկներուն ներշնչում տուին, որ անոնք ալ շուտով մասնակցին հայկական պարախումբին: Ապա բոլոր աշակերտները եւ ծնողները մասնակցեցան միասնութեան շուրջպարին: Անոր հետեւեցան Տէրունական աղօթքի եւ վերանկախացած Հայաստանի պետական քայլերգի միաբերան եւ բարձրաշունչ կատարումները: Յայտագիրը ունէր քաղցր աւարտ. աշակերները *«Տօնդ Շնորհաւոր»* երգելով կտրեցին Անկախութեան կարկանդակ մը:

Ս. Գրիգոր Լուսաւորիչ շաբաթօրեայ վարժարանը հայոց լեզուի եւ մշակոյթի դաստիարակութիւն կու տայ 4-12 տարեկան հայորդիներուն: Դպրոցի ծրագիրներուն մէջ կարեւոր տեղ կը գրաւեն նաեւ հայկական ասմունքը, երգը եւ պարը: Այս տարի դպրոցը ունի նաեւ երգի յատուկ ուսուցչուհի եւ դասաժամ:

Համակարգ

ԿԳՄՍ նախարարին կից հասարակական խորհրդի հերթական նիստը

Տեղի է ունեցել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարին կից հասարակական խորհրդի հերթական նիստը, որը վարել է ԿԳՄՍ նախարարի տեղակալ **Ժաննա Անդրեասյանը:** Նիստի օրակարգն այս անգամ ձեւավորվել էր խորհրդի անդամների առաջարկությունների հիման վրա, եւ զեկույցներով հանդես են եկել հենց խորհրդի անդամները:

Ողջունելով հանդիպման մասնակիցներին՝ Ժաննա Անդրեասյանը կարեւորել է այն փաստը, որ նիստի օրակարգը ձեւավորվել է հասարակական խորհրդի անդամների առաջարկությունների հիման վրա:

«Սա նշանակում է, որ ի դեմս խորհրդի՝ մենք փորձում ենք ձեւավորել այն հարթակը, որտեղ միայն նախարարությունը չէ որոշում նիստի օրակարգը, եւ խորհրդի անդամները հանդես են գալիս՝ իբրեւ լոկ կարծիք հայտնող: Սրանով մենք փորձում ենք աշխատել համահավասար դաշտում, որտեղ նախարարությունը եւս հանդես է գալիս լսողի դերում եւ կիսում այն առաջարկները, որոնք կարեւորում է խորհուրդը: Հուսով եմ, որ արդյունավետ քննարկում կծավալվի, քանի որ օրակարգի բոլոր հարցերն արդիական են եւ մատնանշում են մեր իրականության կարեւոր խնդիրները»,- նշել է Ժաննա Անդրեասյանը՝ հավաստիացնելով, որ նախարարությունը պատրաստակամ է լսել բոլոր առաջարկներըգ դրանք կգրանցվեն, կքննարկվեն վարչությունների ներսում եւ, ըստ անհրաժեշտության, հաշվի կառնվեն:

Ըստ փոխնախարարի՝ ԿԳՄՍ ոլորտները ՀՀ կառավարության առաջնահերթություններից են, եւ այդ մասին է վկայում գործադիրի վերջին նիստում հավանության արժանացած 2022 թվականի բյուջեի հայտի նախագիծը, որով ԿԳՄՍ ոլորտներին հատկացվող միջոցներն ավելի քան 20 տոկոսով աճել են:

«Սա նշանակում է, որ բազմապատիկ մեծանում է նաեւ բոլորիս պատասխանատվությունը, որպեսզի բոլոր մեր ծրագրերն իրականացվեն որակով, արդյունավետ եւ ժամանակին: Այս առումով՝ հասարակական խորհուրդը եւս իր արդյունավետությունը բարձրացնելու խնդիր ունի՝ որպես թափանցիկության եւ հանրային վերահսկողության գրավական: Հետեւաբար, հուսով եմ, որ միասին կգտնենք այդ աշխատանքներն արդյունավետ իրականացնելու տարբերակներ»,- փաստել է նախարարի տեղակալը:

Այնուհետեւ խորհրդի անդամներն անցել են օրակարգի հարցերի քննարկմանը: Խորհրդի անդամ, Մատենադարանի ավագ գիտաշխատող, բանասիրական գիտությունների թեկնածու **Անահիտ Ասատրյանը** հանդես է եկել զեկույցով՝ *«Թանգարանների նպատակային գիտականացումը՝ իբրեւ երիտասարդ կադրերի ներգրավման միջոց եւ գիտության ու մշակույթի միասնական համագործակցության ծրագիր»* թեմայով: Նրա խոսքով՝ թանգարանային ծրագրերում անհրաժեշտ են ժամանակի պահանջներին համապատասխան շտկումներ եւ փոփոխություններ կատարել՝ այցելությունների քանակն ավելացնելու եւ դրանց հաճախականությունը գոնե կրկնապատկելու համար: Անահիտ Ասատրյանը նշել է, որ թանգարանը պետք է լինի ոչ միայն ժամանցի ու հաճույքի, այլեւ կրթության ու հանրային կյանքի մեջ ներգրավվածության եւս մի կարեւոր ու անփոխարինելի օղակ:

«Շատ մեծ կարեւորություն ունեն թանգարանային էքսպոզիցիան եւ այն տեքստը, թե ինչ է լսում այցելուն թանգարանում, որպեսզի մոտիվացվի նրա հաջորդ այցելությունը թանգարան: Առաջարկում եմ, որ ամեն տարի թանգարանների եւ գիտական հաստատությունների միջեւ ձեռք բերվի պայմանավորվածություն, որ գիտական հաստատություններն ուղարկեն իրենց վերջին տարվա ուսումնասիրությունները՝ համապատասխան թանգարանում ներկայացվող նյութի վերաբերյալ, իսկ թանգարանները ներառեն դրանք իրենց էքսկուրսիոն տեքստերի մեջ: Արդյունքում կշահի թանգարանը, այցելուն կլսի նոր եւ թարմացված էքսկուրսիոն տեքստեր, ձեռք կբերի գիտելիքներ տվյալ մշակութային արժեքի մասին, եւ թանգարանը կդառնա ավելի գրավիչ ու ժամանակակից՝ որպես հանրությանը կրթող եւս մի օղակ: Այսպիսով՝ մենք կապահովենք ոչ միայն գիտության եւ մշակույթի կապը, այլեւ կստեղծենք այցելուի համար գիտական նորույթների վրա հիմնված հանրային միջավայր»,- նշել է Անահիտ Ասատրյանը՝ իր զեկույցում անդրադառնալով նաեւ թանգարանների՝ երիտասարդ կադրերով համալրման հարցին:

Զեկույցից հետո ծավալվել է բուռն եւ արդյունավետ քննարկում: ԿԳՄՍ պաշտոնյաները ներկայացրել են հարցի շուրջ նախարարության տեսակետը: Ժաննա Անդրեասյանն անդրադարձել է դպրոցական աբոնեմենտային ծրագրին՝ շեշտելով, որ թեմատիկ առումով խնդիր կա սերտացնել դրա կապը դպրոցի բովանդակության հետ:

«Էքսկուրսիոն տեքստերը պետք է լինեն կենդանի, իսկ թիրախային ու տարիքային տարբեր խմբերի համար լինեն առանձին ծրագրեր: Արտերկրում բազմիցս ականատես ենք եղել՝ ինչպես են դպրոցական որոշ դասեր անցկացվում հենց թանգարաններում, եւ այս պրակտիկան տեղայնացնելու խնդիր ունենք: Այս առումով մեր թանգարանները պետք է լինեն ավելի նախաձեռնող»,- նշել է փոխնախարարը՝ կարեւորելով նաեւ մարզային թանգարանների արդիականացման հարցը:

Հաջորդ՝ *«Դպրոցների հավասարապես ֆինանսավորման եւ ենթակայության խնդիր»* թեմայով զեկույցը ներկայացրել է խորհրդի անդամ, Բջնիի դպրոցի նախկին տնօրեն **Յաշա Սահակյանը:** Նա նշել է, որ կրթության ոլորտի ամենակարեւոր խնդիրներից են հանրակրթական դպրոցների ֆինանսավորման հարցը եւ դրա համար կիրառվող բանաձեւը: Յաշա Սահակյանի խոսքով՝ այդ բանաձեւը փոքրաքանակ աշակերտական կազմ ունեցող դպրոցներում աստիճանաբար առաջացրել է ֆինանսական տարբեր խնդիրներ: Այդ նպատակով նա առաջարկել է կազմավորել աշխատանքային խումբ՝ դպրոցների հստակ եւ հավասարապես ֆինանսավորման բանաձեւ մշակելու նպատակով, եւ այդ խմբում, բացի նախարարության աշխատակիցներից, ընդգրկել նաեւ տարբեր բնակավայրերի հիմնական, միջնակարգ եւ ավագ դպրոցների տնօրենների ու այլ ցանկացողների: Յաշա Սահակյանն առաջարկել է նաեւ քննարկել իր մշակած ֆինանսական բանաձեւի բաղկացուցիչ մասերը:

Զեկուցումից հետո Ժաննա Անդրեասյանը տեղեկացրել է, որ նախորդ տարի նախարարությունը շրջանառության մեջ էր դրել եւ լայնորեն քննարկել ֆինանսավորման նոր բանաձեւի նախագիծը, որը հիմնվում էր ոչ թե սովորող թվով, այլ դասարան թվով ֆինանսավորման վրա: Այդ բանաձեւով կարգավորվում էր նաեւ աշխատակիցների վարձատրության քաղաքականությունը:

«Նոր չափորոշիչների ներդրմամբ նախատեսվում է, որ ֆինանսական տեսանկյունից կլինեն էական փոփոխություններ, քանի որ դրանց ներդրումը ենթադրում է նաեւ ուսուցչի աշխատանքի կառուցվածքի փոփոխություն: Բացի դրանից՝ փոփոխության է ենթարկվում նաեւ դպրոցի ընդհանուր ֆինանսավորման ծավալը: Ներկայում այդ բանաձեւը լրամշակման փուլում է. առաջիկայում կլինեն լայն քննարկումներ, եւ այն կանցնի նաեւ փորձարկման կոնկրետ գործընթաց: Հետեւաբար, առաջարկում եմ Ձեր բոլոր առաջարկները համատեղել վերը նշված գործընթացների հետ եւ ներգրավվել համապատասխան աշխատանքներում»,- շեշտել է նախարարի տեղակալը:

Խորհրդի անդամները հնչեցրել են ելույթներ երկու զեկուցվող հարցերի շուրջ եւ հանդես եկել առաջարկներով:

Նիստի ավարտին որոշում է կայացվել հրավիրել խորհրդի արտահերթ նիստ՝ քննարկելու մշակույթի ոլորտի դրամաշնորհների տրամադրման հարցը, որն օրակարգում ներառելու առաջարկով հանդես են եկել հենց խորհրդի անդամները:

Հեղինե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Աշխարհի հետ

ԿԳՄՍ փոխնախարարը մասնակցել է ԱՊՀ 30-ամյակին նվիրված համաժողովին

Բելառուսի Գիտությունների ազգային ակադեմիայում տեղի է ունեցել *«Անկախ պետությունների համագործակցության 30-ամյակ՝ արդյունքներ, հեռանկարներ»* թեմայով համաժողովը:

Միջոցառմանը մասնակցել են ԱՊՀ երկրների պետական մարմինների ավելի քան 300 ներկայացուցիչներ, առաջատար գիտնականներ եւ մասնագետներ, մի շարք պետությունների խոշորագույն գիտակրթական կազմակերպությունների ղեկավարներ:

Համաժողովին զեկույցով հանդես է եկել ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ **Արթուր Մարտիրոսյանը:** Բարձր գնահատելով ԱՊՀ-ի 30-ամյա ներդրումը գիտության եւ կրթության զարգացման գործում՝ Արթուր Մարտիրոսյանն ընդգծել է միջոցառման կարեւորությունը ԱՊՀ գիտակրթական տարածքում ուղենշային մոտեցումներ առաջադրելու առումով:

«Գիտական գործունեության բնագավառում Հայաստանի Հանրապետության քաղաքականությունն իրականացվում է ժամանակակից միտումներին, աշխարհում գիտության եւ տեխնիկայի զարգացման հեռանկարներին համապատասխան: Պետությունը մեծ ռեսուրսներ է հատկացնում ինչպես բնական եւ տեխնիկական, այնպես էլ սոցիալ-հումանիտար գիտությունների զարգացման համար: Հատուկ ուշադրություն է դարձվում հայագիտական առարկաների զարգացմանը, ինչպես նաեւ համապատասխան գիտական կենտրոնների եւ հայկական սփյուռքի հետ կապերի ամրապնդմանը: Իրականացվում են գիտատեխնիկական ենթակառուցվածքի կատարելագործման, ժամանակակից գիտական սարքավորումներով վերազինման նախագծեր»,- նշել է ԿԳՄՍ նախարարի տեղակալը՝ հավելելով, որ զգալի առաջընթաց է արձանագրվել գիտատեխնիկական ոլորտում միջազգային համագործակցության ընդլայնման եւ խորացման, միջազգային գիտական հանրությանն ինտեգրվելու գործում:

Ըստ փոխնախարարի՝ նպատակաուղղված եւ հետեւողական աշխատանք է տարվում գիտնականների նոր սերնդի ձեւավորման, գիտության մեջ երիտասարդ եւ հեռանկարային կադրերի ներգրավման ուղղությամբ: Բազմաթիվ համաձայնագրերի շրջանակում 2011 թվականից սկսած անցկացվում են գիտական նախագծերի համատեղ միջազգային մրցույթներ, գիտատեխնիկական կապերը զարգանում են ոչ միայն հիմնարար, այլեւ կիրառական հետազոտությունների բնագավառում:

ԱՊՀ շրջանակում գիտատեխնիկական համագործակցության հետագա զարգացման առումով Արթուր Մարտիրոսյանը կարեւորել է ԱՊՀ մասնակից պետությունների հիմնարար հետազոտությունների ոլորտում միջպետական հարաբերությունների համակարգման մասին 2019 թվականի մայիսի 31-ին Աշգաբադում ստորագրված համաձայնագիրը, որի մաս է կազմում նաեւ Հայաստանի Հանրապետությունը: Նրա խոսքով՝ համաձայնագրի շրջանակում փոխշահավետ եւ իրավահավասար հիմունքներով զարգանում է համագործակցությունը հիմնարար հետազոտությունների ոլորտում, ինչը նպաստում է հիմնարար հետազոտությունների նկատմամբ հետաքրքրության զարգացմանը եւ գիտական կադրերի պատրաստման որակի բարձրացմանը՝ ներառյալ SS երիտասարդ գիտնականների մրցույթները:

«Եվրասիական տնտեսական միության երկրների միջեւ ստորագրված համագործակցության մասին համաձայնագրերի շրջանակում իրականացվում են համատեղ նախագծեր տարբեր գիտատեխնիկական ուղղություններով, իսկ դրանց արդյունքներն արտացոլում են ոչ միայն համագործակցության բարձր մակարդակը, այլեւ վկայում են համագործակցության լավ ավանդույթների եւ լուրջ հեռանկարների մասին: Նշեմ, որ Հայաստանի Հանրապետությունն այս տարի նախագահող երկիր է Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների կրթության ոլորտում համագործակցության խորհրդում, որի հերթական նիստը հոկտեմբերի 7-ին տեղի կունենա Երեւանում: Հեռանկարում ԱՊՀ-ն լավ հնարավորություն է հետխորհրդային երկրների երկխոսության համար՝ տարբեր հումանիտար, քաղաքական եւ մշակութային ուղղություններով»,- շեշտել է ԿԳՄՍ նախարարի տեղակալը:

Նշենք, որ Հայաստանի Հանրապետության նախագահության ստանձնման մասին որոշումը միաձայն ընդունվել է 2020 թվականի հոկտեմբերի 21-ին տեղի ունեցած՝ ԱՊՀ անդամ պետությունների կրթության ոլորտում համագործակցության խորհրդի հերթական նիստին:

Հավելենք, որ համաժողովը կայացել է 2021-2022 թթգ-ի համար ԱՊՀ մասնակից երկրների հումանիտար համագործակցության բնագավառում առաջնահերթության ծրագրերի միջոցառումներին համապատասխան:

Հեղինե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ժենյա ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ազգային թատրոնը մեծ կորուստ ունեցավ. այլեւս նրա բեմը չի զարդարի **ժենյա ԱՎԵՏԻՍՅԱՆ** դերասանուհին, ով Մետաքսյա Սիմոնյանից հետո արժանացավ բեմի առաջնուհու փառքին եւ ամենքի կողմից սիրելի արտիստուհու համբավին: Այլեւս մեր կողքին չէ Երեւանի գեղեցկագույն տիկինը, տաղանդավոր դերասան Յուրի Ամիրյանի կյանքի եւ բեմի զուգընկերը:

Ժենյա Ավետիսյանը ծնվել է 1941 թվականի հուլիսի 16-ին, Երեւանում: Ավարտել է Երեւանի գեղարվեստա-թատերական ինստիտուտը, 1964 թվականից հանդես է եկել Գաբրիել Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում՝ խաղալով 100-ից ավելի ներկայացումներում:

Ժենյա Ավետիսյանը նկարահանվել է ավելի քան 20 գեղարվեստական ֆիլմերում, որոնցից առավել հիշարժան են *«Գիքոր»* (1982 թ.), *«Ճերմակ անուրջներ»* (1985 թ.), *«Ժայռը»* (1973 թ.), *«Մարդն Օլիմպոսից»* (1974 թ.) եւ այլն:

Թատրոնում սիրված դերասանուհու կերտած ակնառու կերպարներից են Նատալյան՝ *«Խաթաբալա»*-ում, Բիանկան՝ *«Օթելլո»*-ում, էփեմիան՝ *«Պեպո»*-ում, Նադենկան՝ *«Կամք»*-ում եւ այլն:

Հայ հանդիսատեսի համար հոգեհարազատ են նաեւ նրա կերտած դերերը կինոյումգ Վարդուհին՝ *«Ճերմակ անուրջներ»*-ում, Նատոն՝ *«Գիքոր»*-ում, Մարգարիտը՝ *«Ժայռ»*-ում եւ այլ սիրված ու հիշարժան դերեր:

Արտաքին հմայքից՝ ներքին հմայք. այդպիսին էին արտիստուհու կերպարները՝ ազգային խառնվածքով եւ տիպաբանությամբ: Հենց այս իմաստով նրա մահը մեծ կորուստ է ազգային թատրոնի համար, մանավանդ որ բեմական կյանքով հարուստ դերասանուհին դեռ շատ դերակատարումներ կարող էր պարգեւել հանդիսականներիս:

Ժենյա Ավետիսյանը ՀԽՍՀ վաստակավոր եւ Հայաստանի Հանրապետության ժողովրդական արտիստ էր, *«Հայրենիքին մատուցած ծառայությունների համար»* 1-ին աստիճանի մեդալակիր:

Ժենյա Ավետիսյանի անունը եւ հիշատակը վառ կմնա գործընկերների եւ բազմաթիվ երկրպագուների սրտերում:

Կառավարական հանձնաժողով

Լույս է տեսել

Մանկավարժականի ներդրումն Արցախյան պատերազմում

Նրանց գործն անմահ է

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ, հրատարակվել է Արցախյան պատերազմի մասնակից համալսարանականներին նվիրված՝ **Տիգրան Պետրոսյանցի** *«Հայրենիքիք համար»* կենսագրական հանրագիտարանը:

Արցախյան պատերազմի մասին շատ անգամներ ու շատերն են գրել: Հերթական անգամ ընթերցողի սեղանին է դրվել հանրագիտակ հերոսապատումը: Այս գիրքը պատերազմական անքակտելի ընթացքներն իրար կապող, տարբեր ժամանակներն իրար կամրջող նյութից է կազմվել: *«Հայրենիքի համար»* հանրագիտարանը կարդացվում է ցավով, հավատով, մեծ թախիծով եւ կորստի անդարձ կարոտով: Պատերազմը չարիք է, որն էլ ունի իր չար օրենքները եւ այս անգամ էլ հայը չպարտվեց, ավաղ ունեցավ իր բազում նահատակները: Կռվող տղաներն ուժեղ էին, եւ ամեն մեկն ուներ առյուծի սիրտ:



Դեռ 1988 թվականից սկսած, երբ հայ ժողովուրդը դուրս էր եկել ազատագրական պայքարի Ացախյան պատերազմում, ոտքի կանգնեցին նաեւ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի բազում դասախոսներ եւ ուսանողներ, ձեւավորելով կամավորական ջոկատ: Անհրաժեշտ էր օգնության հասցնել Արցախի պաշտպանական ջոկատներին, եւ այդ գործին միացան դասախոսներ **Բենիկ Սիսյանը, Գուրգեն Ղուլղազարյանը, Սերգեյ Կարապետյանը, Կիմ Ղահրամանյանը:** Զենք-զինամթերքի հայթայթման եւ Արցախ հասցնելու գործում ակտիվ մասնակցություն է ունեցել **Ալեքսանդր Ղուշչյանը:** Պրոֆեսոր **Լեւոն Հարությունյանի** ջանքերով սննդամթերք եւ զինվորական հագուստ է ուղարկվել Արցախ:

Արցախյան առաջին պատերազմը շարք կանչեց շուրջ յոթանասուն մանկավարժականցիների, որոնցից տասնյոթը հավերժացան: Հայրենիքի համար մարտերում հերոսացավ նաեւ **Մովսես Գորգիսյանը,** ով ստեղծել էր *«Անկախության բանակ»* ջոկատը՝ որպես ապագա ազգային բանակի հիմք: 1990 թվականի հունվարի 18-19-ին մասնակցել է Երասխի ինքնապաշտպանական մարտերին եւ զոհվել: Նա արժանացել է Հայաստանի Ազգային հերոսի կոչման:

2016 թվականի ապրիլի 2–ին թշնամին չորսօրյա պատերազմ սկսեց Արցախի դեմ: Երկրորդ պատերազմին մասնակցեցին քսանից ավելի մանկավարժականի ուսանողներ, որոնք գտնվում էին Արցախի զինված ուժերի զորամասերում: Համալսարանի պարային բաժնի առաջին կուրսեցի **Նորիկ Գասպարյանը** հերոսաբար զոհվեց՝ հանուն հայրենիքի:

Դաժան էր 2020 թվականի սեպտեմբերի 27-ի ուխտադրուժ պատերազմը: Այս պատերազմի գործողություններին մասնակցեցին նաեւ Արցախյան առաջին եւ երկրորդ պատերազմի մասնակիցների զավակները: Նրանց շարքում էին երկու հարյուրից ավելի Մանկավարժականի ուսանողներ, եւ ավարտած շրջանավարտները: Համալսարանի հարյուրավոր ուսանողներ պատերազմի քառասունչորս օրերին մասնակցում էին անհավասար մարտերի, նրանցից 35-ը հերոսաբար հավերժացան:

Արցախյան երեք պատերազմներին մասնակցել է շուրջ 310 մանկավարաժականցի: Նրանցից 53-ը ընկել են մարտում՝ հանուն Հայրենիքի:

Ճանաչենք մեր հերոսներին. Պարույր Սեւակի խոսքերով՝ *Անմահները հրամայում են:*

Աննա ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ՀՊՄՀ գիտական գրադարանի ընթերցասրահների բաժնի պետ

Հայկ ՀԱԿՈԲՅԱՆ (Հայկո)

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը խորը վշտով տեղեկացնում է, որ 44 տարեկան հասակում կյանքից հեռացել է ՀՀ վաստակավոր արտիստ, երգիչ, երգահան **Հայկոն՝ Հայկ ՀԱԿՈԲՅԱՆԸ**:

Հայկ Հակոբյանը ծնվել է 1977 թ. օգոստոսի 25-ին, Երեւանում: 1987 թ. ավարտել է Երեւանի Տ. Չուխաջյանի անվան երաժշտական դպրոցը եւ ընդունվել Ռ. Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարան: 1999 թ. ավարտել է Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան:

1996 թ. *«Մոսկվա 96»* երգի փառատոնին արժանացել է 1-ին մրցանակի: 1997 թ. մասնակցել է Նյու Յորքի *«Big Apple»* երգի փառատոնին եւ դարձել հաղթող: 1998 թ. հայկական *«Այո»* երգի մրցույթին արժանացել է *«Լավագույն հեղինակ-կատարող»* մրցանակի: 1998 թ., 1999 թ., 2002 թ., 2003 թ. եւ 2006 թ. հայկական երաժշտական ամենամյա մրցանակաբաշխությունների ժամանակ արժանացել է *«Տարվա լավագույն երգիչ»* մրցանակին, 2002 թ.՝ *«Տարվա լավագույն նախագիծ»*, *«Տարվա լավագույն ալբոմ»*, 2003 թ.՝ *«Տարվա լավագույն տեսասկավառակ»* մրցանակներին:

2003 թ. առաջին մենահամերգով հանդես է եկել ԱՄՆ-ի Լոս Անջելես քաղաքում: 2007 թ. *«Anytime you need»* երգով ներկայացրել է Հայաստանը *«Եվրատեսիլ»* երգի միջազգային մրցույթի ժամանակ եւ զբաղեցրել 8-րդ տեղը: Հեղինակել է *«Մի՛ վախեցիր»* (2007 թ., *«Տարվա լավագույն կոմպոզիտոր»*), *«Ոչինչ չի մնա»* (2007 թ.), *«Սպանված աղավնի»* (2009 թ., *«Տարվա լավագույն կոմպոզիտոր»*), *«Խաչագողի հիշատակարանը»* (2010 թ., *«Տարվա լավագույն կոմպոզիտոր»*), *«Հոբելյանական հաճախորդ»* (2011 թ.), *«Վանա ծովուն արշալույսը»* (2011 թ.), *«Գարեգին Նժդեհ»* (2013 թ.), *«Մեր սրտի տնակը»* (2014 թ.) եւ այլ ֆիլմերի երաժշտություններ: 2011 թ. Մոսկվայի հայկական երաժշտական *«Արմենիա»* ամենամյա մրցանակաբաշխության ժամանակ արժանացել է «Տասնամյակի երգիչ» մրցանակին: 2012 թ. *«Արմենիա»* հեռուստաընկերությամբ հանդես է եկել՝ որպես *«Հայաստանի ձայնը»* հեռուստանախագծի երաժշտական պրոդյուսեր: Թողարկել է *«Ռոմանս»* (2000 թ.), *«Նորից»* (2003 թ.), *«Մի խոսքով»* (2007 թ.), *«Ես քեզ սիրահարվել եմ»* (2014 թ.) ձայնասկավառակները, երկու տեսասկավառակ: Նկարահանել է շուրջ 20 տեսահոլովակ: 2006 թ. արժանացել է Հայաստանի վաստակավոր արտիստի կոչման:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը ցավակցում է Հայկ Հակոբյանի ընտանիքի անդամներին, հարազատներին, նրա արվեստի երկրպագուներին:

Տուն-թանգարաններ

Իսահակյան հեղինակին *«միավորել»* ենք նորագույն տեխնոլոգիաների հետ

Ավ. Իսահակյանի տուն-թանգարանի տնօրեն **Անժելա Խորենյանը** ներկայացրել է թանգարանում արդի տեխնոլոգիաների կիրառման հետաքրքիր փորձառությունը:

Նորագույն տեխնոլոգիաները թանգարաններում ժամանակի հրամայական են

Թանգարաններն այսօր չի կարելի պատկերացնել՝ առանց նորագույն տեխնոլոգիաների կիրառման. դա ժամանակի եւ այսօրվա մարդու պահանջն է: Թանգարանը հիմնականում իր մեջ ամփոփում է այլ ժամանակ՝ դրանով իսկ դառնալով խորհրդավոր ու հետաքրքիր: Եվ այդ ժամանակը, կարծես, կենդանանում է աչքիդ առաջ՝ մտնելով քո երեւակայական աշխարհ: Թանգարանների առումով՝ նորագույն տեխնոլոգիաների օգտագործումը նպատակ ունի ներազդելու այցելուի զգացմունքային աշխարհի վրա, ֆանտաստիկ վեպերի օրինակով մարդուն տեղափոխելու այլ ժամանակի մեջ, վկան եւ մասնակիցը դարձնելու կատարվող իրողություններին: Եվ այցելուն այս դեպքում դադարում է կողքից դիտող լինելուց՝ ինչպես դասական ցուցադրության դեպքում է: Աշխարհի լավագույն թանգարանները վաղուց արդեն այս ճանապարհով են գնում:

Նորագույն տեխնոլոգիաները Ավետիք Իսահակյանի տուն-թանգարանում

Ավ. Իսահակյանի տուն-թանգարանը ամփոփում է իր մեջ գրողի ապրած ժամանակը, նրա կյանքն ու ստեղծագործությունը: Բանաստեղծությունը, ինչպես երաժշտությունը, ունի անմիջական ազդեցություն մարդու վրա, նրան միանգամից տեղափոխում է զգացմունքների աշխարհ, ստեղծում այն էներգետիկ միջավայրը, որտեղ միայն ու միայն ապրումների ու հույզերի ազդեցությունն է: Այս տեսանկյունից էլ մենք փորձ արեցինք ստեղծել մի հետաքրքիր օրինակ՝ Իսահակյան հեղինակին *«միավորելով»* նորագույն տեխնոլոգիաների հետ:

Ռիալտոյի կամուրջը՝ *«3D»* ձեւաչափով

Հաշվի առնելով, որ դպրոցական ծրագրում ընդգրկված է Ավետիք Իսահակյանի *«Մի մրահոն աղջիկ տեսա»* բանաստեղծությունը, որը կապվում է նաեւ Վենետիկի՝ աշխարհի գեղեցիկ ու ռոմանտիկ քաղաքներից մեկի անվան հետ, որոշեցինք կանգ առնել հենց այս ստեղծագործության վրա: Գաղափարը ծնվեց մտքերի փոխանակման արդյունքում, իրականացվեց *«Interactive World»* կազմակերպության կողմից: Դա մուլտիմեդիոն համակարգի միջոցով Ավ. Իսահակյանի երկու ստեղծագործության՝ *«Կուզեի լինել գարնան արեգակ»* եւ *«Մի մրահոն աղջիկ տեսա»* բանաստեղծությունների 3D ձեւաչափով արտածումն է Վենետիկի բազմաթիվ կամուրջներից մեկի՝ Ռիալտոյի մանրակերտի վրա: Արդյունքում ստեղծվում է կախարդական միջավայր:

Հայտնի է, որ Իսահակյանը սիրո անզուգական ապրումների բանաստեղծ է, եւ ինչպես գրականագետ Արամ Ինճիկյանն է բնորոշել՝ սիրո զգացմունքի եւ տառապանքի պատկերման ուժգնությամբ մեր գրականության մեջ Սայաթ-Նովայից հետո երկրորդն Իսահակյանն է: Այցելուների աչքի առաջ կամրջի վրա հայտնվում է երիտասարդ Իսահակյանը՝ գիշերային աստղալույսերի ներքո, իսկ ծովի ծփանքի ու սահող գոնդոլների ֆոնին հնչում է բանաստեղծությունը, որը հիշողություն է, սիրո ապրում, կարոտ, անսահման նվիրում սիրած էակին (*«Կուզեի լինել գարնան արեգակ»*): Այս ստեղծագործության վերջին տողերի հետ օրը սկսում է բացվել, լսվում են մարդկանց աշխույժ ձայները, եւ այս խոհերից հետո լսվում է հաջորդ, կարծես ավելի իրական ստեղծագործությունը (*«Մի մրահոն աղջիկ տեսա»*): Բանաստեղծը տեսնում է գեղեցիկ, մրահոն աղջկան, վերջինս ժպտում է, մոտենում բանաստեղծին, փորձում հրապուրել, բայց տառապանքի մեջ իմաստնացած բանաստեղծի վիրավոր հոգին չի հավատում աղջկա անկեղծությանը:

Այս *«բեմադրությունը»* տեւում է ընդամենը 1 րոպե 50 վայրկյան, բայց պետք է տեսնել մարդկանց, հատկապես՝ դպրոցականների եւ ուսանողների ոգեւորությունը, ավարտին հաճախ ծափահարում են: Ի դեպ, մեր թանգարանի այցելուների քանակն ավելացավ նաեւ այս ծրագրի արդյունքում: Սա մեր առաջին փորձն էր (2017 թվականին), որից էլ ոգեւորված սկսեցինք մտածել այլ նախագծերի մասին:

«Իսահակյանը Սեւանա կղզում» մեծակտավ գեղանկարի անիմացիան

Հաջորդն էդվարդ Իսաբեկյանի *«Իսահակյանը Սեւանա կղզում»* մեծակտավ գեղանկարի անիմացիան էր: Այս ծրագիրն իրականացվել է *«Arloopa»* կազմակերպության հետ: Հեռախոսային հավելվածի միջոցով կտավը կենդանանում է այցելուների առաջ. վերջիններս տեսնում են Սեւանի ծփացող ալիքները, երկնքում սահող ամպերը, լսում են ալիքների ու քամու ձայնը, իսկ առաջին պլանում պատկերված բանաստեղծը արտասանում է իր *«Հայրենիքիս»* բանաստեղծությունը: Ձայնագրված է հենց Իսահակյանի ձայնը: Եվ այցելուի աչքի առաջ կարծես պատկերվում է կենդանի Իսահակյանը: Այցելուները հաճախ են նկարվում այս կտավի կողքին:

Ղազարապատ գյուղը՝ արեւածագից մինչեւ մայրամուտ

Թանգարանի վերջին աշխատանքներից են հիմնական ցուցադրության մաս կազմող երկու՝ *«Ղազարապատ գյուղը»* (ցուցադրության նպատակով արված ոչ անհատական աշխատանք) եւ Հրաչյա Ռուխկյանի *«Աբու-Լալա Մահարի»* գեղանկարների (կատարվել է «Interactive Worldե կազմակերպության կողմից) անիմացիաները: Դրանցից առաջինում պատկերված առարկաները դարձյալ կենդանանում են. սահում են ամպերը, լսվում է թռչունների ծլվլոցը, օրորվում է գետափի ուռին, երեւում են հոսող գետի ալիքները, կենդանիները մոտենում են գետին՝ ջուր խմելու, Իսահակյանների՝ գյուղի տան առջեւ նստած կանանցից մեկը մտնում է տուն: Եվ մի քանի վայրկանների մեջ այցելուն

տեսնում է Ղազարապատ գյուղն արեւածագից մինչեւ մայրամուտ եւ գիշեր, երբ տներում վառվում են լույսերը, իսկ երկինքը դառնում է աստղազարդ: Այս աշխատանքն ավելի շատ գրավում է փոքր տարիքի այցելուներին:

«Աբու-Լալա Մահարին» նորագույն տեխնոլոգիաների օգտագործմամբ

Մյուսը՝ Հրաչյա Ռուխկյանի *«Աբու-Լալա Մահարի»* գեղանկարը պատկերում է հոգնած եւ հանգստացող ուղտերին, որոնք շարժում են գլուխները, պոկում եւ ծամում են իրենց առջեւ բուսած փշերից, իսկ նստած եւ մտքերի մեջ ընկած Աբու-Լալան (կերպարը նույնպես շարժվում է) հնչեցնում է պոեմից մի հատված, որ համահունչ է նկարի տրամադրությանը՝ *«Աշխարհն էլ ասես մի հեքիաթ լինի...»*: Այս հատվածն ընտրվել է՝ Իսահակյանի այս հանճարեղ պոեմի տրամադրությունը հատկապես ընդգծելու եւ այն այցելուին հնարավորինս ամբողջական փոխանցելու նպատակով:

Հետաքրքիր գաղափարների իրականացումը շարունակվում են

Միայն ներկայացվածով չի ավարտվում Ավ. Իսահակյանի տուն-թանգարանի աշխատակազմի կողմից նորագույն տեխնոլոգիաների օգտագործման փորձառությունը: Մենք ունենք նոր եւ հետաքրքիր գաղափարներ, որոնք անպայմանորեն կիրականացվեն:

Ալլա ՍԵՐՈԲՅԱՆ

Հոբելյան

Էջմիածնի կենտրոնական գրադարանը 100 տարեկան է

100-ամյակը ցանկացած գրադարանի համար միշտ էլ առիթ է ուրախանալու: Սակայն Էջմիածնի կենտրոնական գրադարանի 100-ամյակին անդրադառնալու եւ նրա անցած ուղին գնահատելու համար՝ լավագույն առիթ է:

Գրադարանի ստեղծման պատմությունը կապված է հայ նոր քնարերգության հիմնադիրներից մեկի, մանկավարժ եւ մշակութային-հասարակական գործիչ Հովհաննես Մկրտչի Հովհաննիսյանի (1864-1929) անվան հետ: Նրա կյանքի ու գործունեության մասին ***«Բանբեր Հայաստանի արխիվների»*** **հանդեսի 1975թ. հ. 2-ում** (էջ 5-166) տպագրված փաստաթղթերից (նամակներ, զեկուցագրեր, ուսումնական ծրագրեր)՝ ընդգրկելով 1873-1922թթ., տեղեկանում ենք, որ Հովհաննես Հովհաննիսյանը սովորել եւ ավարտել է Մոսկվայի համալսարանի պատմա-լեզվագրական ֆակուլտետը (1884-1888): Լինելով ճանաչված բանաստեղծ, նա ակտիվ մասնակցություն է ունեցել նաեւ Խորհրդային Հայաստանի կուլտուրական շինարարության գործին. 1921թ. եղել է Վաղարշապատի գավառի ժողովրդական լուսավորության բաժնի վարիչը, իսկ 1922թ. աշխատել է ՀԽՍՀ ժողկոմխորհի օրենսդրական հանձնաժողովում: Նրա գործունեության ընթացքում միակ ղեկավարը, իր իսկ խոսքերով ասած, *«եղել է խղճի թելադրությունը եւ պարտաճանաչության խորարմատ զգացումը»*:

Փաստաթղթերի ուսումնասիրումը ցույց է տալիս, որ Հովհաննես Հովհաննիսյանը նպատակ է ունեցել Վաղարշապատում հիմնել գրադարան-ընթերցարան, որի աշխատանքների կազմակերպման համար եւ համաձայն 1921թ. մայիսի `129 գրության՝ վարիչ է նշանակում Գայանե Հարությունյանին: Գրության մեջ նշված է. *«Նշանակելով Ձեզ սույն մայիսի 1-ից Վաղարշապատի գրադարան-ընթերցարանի վարիչ, խնդրում եմ ամենակարճ ժամանակում կարգի բերել բոլոր ընթերցանության գրքերը, հայտնել բաժնիս, թե քանի՝ հատոր եւ ի՞նչ բովանդակությամբ գրքեր կան գրադարանում եւ հայտարարել ի գիտություն հասարակության, որ բոլոր ցանկացողները կարող են ձրիաբար օգտվել այնտեղ եղած գրքերից: Խնդրում եմ նաեւ հետզհետե կազմել կանոնավոր գրացուցակ եւ ժամանակին ներկայացնել բաժնիս: Գրադարան-ընթերցարանի անհրաժեշտ կարիքների մասին խնդրում եմ հայտնել բաժնիս, նախահաշիվ ներկայացնելով բոլոր ծախսերի համար»* (ն.տ., էջ 88-89): Կարճ ժամանակ անց՝ 1921թ. հունիսի 22-ի՝ հ. 144 գրությամբ, Էջմիածնի գավառի ժողովրդական լուսավորության բաժնի կողմից Վաղարշապատի հասարակական գրադարանին է հատկացվում Սեթ Հարությունյանի բնակարանից (Իգդիրի խճուղու վրա) երկու սենյակ: Գրության վրա Հովի. Հովհաննիսյանի ձեռքով մակագրված է. *«Հայտնել գրադարանապետին (Գայանե Հարությունյանին, ով Սեթ Հարությունյանի դուստրն էր) եւ առաջարկել ամենակարճ ժամանակում կարգի բերել եւ բանալ գրադարան-ընթերցարանը ընթերցողների համար»* (ն.տ., էջ 95):

Անհրաժեշտ է նշել, որ ժամանակին Գրադարանի ֆոնդը (ԳՖ) կազմել է 2405 միավոր հայալեզու եւ ռուսալեզու գրականություն եւ, **որպես հասարակական տեսակի առաջին պետական գրադարան Վաղարշապատում՝ սկսել է գործել 1921թ. հուլիսի 3-ից:** Գրադարանի զարգացման ընթացքը եւ նպատակաուղղվածությունը հիմք են տալիս ընդգծել Հովհաննես Հովհաննիսյանի հայրենասիրական մղումների, հասարակության մշակութային մակարդակի բարձրացման ու դպրոցական կրթության զարգացման գործում գրքին, գրադարանային եւ ընթերցանությանը մեծ դեր ու նշանակություն տալու նրա հայացքների մասին: Եվ պատահական չէ, որ Հովհաննիսյանի խորհուրդներն ու ծրագրային դրույթները կարեւոր ուղենիշ եւ սկզբունքային նշանակություն են ունենում իր անունը կրող գրադարանի հետագա գործունեության ու մշակութային-հոգեւոր կյանքի զարգացման համար:

1986թ. հուլիսի 3-ին նշվել է Խորհրդային Հայաստանի գրադարանների շարքում արդեն լայն ճանաչում ստացած Էջմիածնի կենտրոնական գրադարանի 65-ամյակը: Այդ առիթով նույն թվականին Էջմիածնում լույս տեսած հայալեզու եւ ռուսալեզու ուղեցույց-ալբոմը (տե՛ս, **Էջմիածնի կենտրոնական գրադարան -65**: Էջմիածին, 1986.-22 էջ) վկայում է տասնամյակների ընթացքում գրադարանում ձեւավորված համալրման, մշակման, ֆոնդավորման, գրացուցակավորման, ընթերցանության եւ սպասարկման բաժինների ու գրադարանավարների աշխատանքային հաջողությունների մասին: Հրատարակության էջերում զետեղված լուսանկարներից պարզվում է նաեւ, որ գրադարանային աշխատողների եւ ընթերցողների հետ տարբեր տարիներին հանդիպումներ են ունեցել եւ զեկուցումներով հանդես եկել արվեստի ու գրականության բազմաթիվ ներկայացուցիչներ՝ Վարազդատ Հարությունյանը, Պարույր Սեւակը, Ռուբեն Զարյանը, Հովհաննես Շիրազը, Մետաքսյա Սիմոնյանը, Բաբկեն Ներսիսյանը, Սերո Խանզադյանը, Հրաչյա Հովհաննիսյանը, Վարդգես Պետրոսյանը եւ ուրիշներ: Նրանք մեծ կարեւորություն են տվել գրադարանի դերին ու գրադարանավարների աշխատանքներին, ինչպես նաեւ գրքի ընթերցանությանը՝ որպես գիտելիք ձեռք բերելու անփոխարինելի միջոցի, որոնց դերն ու նշանակությունը հետխորհրդային հասարակական կյանքում ավելի են աճում:

Համաձայն աղբյուրների՝ XXI դարասկզբին Հովհաննես Հովհաննիսյանի անվան էջմիածնի քաղաքային գրադարանի գրքային ֆոնդը կազմել է 85.000 միավոր, այդ թվում՝ ամսագրեր՝ 800, թերթեր՝ 3000, ընթերցողների (ծառայողներ, ուսանողներ, դպրոցականներ) թիվը՝ 5.500, գրքատացքը (սպասարկվող գրականության քանակը)՝ 110.615 միավոր, իսկ գրադարանային աշխատողների թիվը՝ 13: Ակնհայտ է, որ վիճակագրական այսպիսի տվյալներով ու վերընթաց զարգացումներով ընդլայնվել են գրադարանի գործառույթները, ապահովելով նրա՝ որպես սոցիալական ինստիտուտի կայունությունը: Փաստորեն առանցքային նշանակություն են տրվել ԳՖ-ի շարունակական համալրման, քարտարանների ու գրացուցակների կազմման, սոցիալական տարբեր խմբերի ընթերցողների սպասարկման աշխատանքներին: Գնահատելի են նաեւ ըստ ճյուղային գիտությունների գրականության՝ գրադարանային-մատենագիտական դասակարգումները, ինչպիսիք են՝ հասարակական-քաղաքական, բնագիտական, բժշկական, տեխնիկական, գյուղատնտեսական, բանասաիրական, գիտական, գեղարվեստական, արվեստ եւ սպորտ:

Մեր կարծիքով՝ Արմավիրի մարզի, ներառյալ Էջմիածին քաղաքի սոցիալ-տնտեսական, գիտատեխնիկական, կրթական ու կառավարման ոլորտների զարգացումներին համապատասխան եւ մասնագետներին օգնելու նպատակով, ցանկալի կլիներ ճյուղային գիտությունների գրականության հիման վրա կազմել ու հրատարակել թեմատիկ (հանձնարարական) բնույթի մատենագիտական օժանդակ ցանկեր: Եվ ճիշտ կլիներ, որ Հայաստանի մյուս մարզկենտրոնների գրադարանները նույնպես հետեւեին այս առաջարկությանը, որի իրականացումը համակարգային զարգացումների տեսանկյունից չափազանց կարեւոր է:

2019թ. տվյալներով Էջմիածնի Հովհաննես Հովհաննիսյանի անվան կենտրոնական գրադարանի ֆոնդը կազմել է 241.081 միավոր բազմալեզու գրականություն, ընթերցողների թիվը՝ 11.384, գրքատացքը՝ 184.969 միավոր, հաճախումների թիվը՝ 108.354, իսկ աշխատողների թիվը՝ 23 (այդ թվում՝ 4-ը բարձրագույն եւ 19-ը միջին մասնագիտական կրթությամբ, որից 18-ը՝ գրադարանային) (Տե՛ս **Հայաստանի գրադարանները 2019թ.** (վիճակագրական վերլուծություն)/կազմ.՝ L. Մուրադյան: - Եր. 2020, էջ 29-41): Հարկ է նշել, որ վիճակագրական նոր տվյալները վկայում եւ հստակ պատկերացում են տալիս գրադարանի բազմակողմանի գործունեության եւ արդյունավետության բարձրացման, գրքային մշակույթի պահպանման, սոցիալ-հաղորդակցական կապերի զարգացման, տարբեր տարիքի(ներառյալ դպրոցականների) ընթերցողական պահանջմունքների բավարարման, ինչպես նաեւ աշխատողների թվակազմերի մասին:

Այնուհետեւ, 2021թ. մայիսի 31-ին գրադարանի տնօրեն Հասմիկ Մելքոնյանի հետ (ով գրադարանը ղեկավարում է 2018թ. նոյեմբերի 22-ից) մեր հանդիպման ժամանակ նշվեց, որ գրադարանային-տեղեկատվական գործընթացներում ներառվել(ում) են համակարգչային-տեխնոլոգիական նոր միջոցներ: Բացի այդ, գրադարանի կազմակերպամեթոդական աշխատանքներում լայն նշանակություն են ստացել տարատեսակ միջոցառումների անցկացումն ու գրականության ցուցադրությունները: Հատկապես վերջինիս ուղղությամբ եւ ընթերցողական հետաքրքրությամբ աչքի են ընկնում գրադարանում տեղ գտած *«Մեր քաղաքը»*, *«Մեր քաղաքի գրողները»* եւ *«Հիշարժան տարեթվեր»* բաժինները: Մեր դիտարկումներով, գրադարանի ֆոնդը համալրված է նաեւ հայալեզու եւ օտարալեզու հազվագյուտ գրքերով՝ տպագրված Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Մոսկվայում, Նյու Յորքում եւ այլուր:

Գրադարանի ֆոնդում եւ հայ գրքի պատմության մեջ, անշուշտ, յուրահատուկ տեղ են զբաղեցնում Հովհաննես Հովհաննիսյանի ստեղծագործությունները (օրինակ՝ *«Ա՛խ, տվեք ինձ քաղցր մի քուն»*, 1884, *«Մնաք բարով, արեւ, գարուն»* 1887, *«Արազն եկավ լափին տալով»*, 1887, *«Վահագնի ծնունդը»* 1904 եւ այլն), որոնք ոչ միայն ներառվել են դպրոցական ու բուհական դասագրքերում, այլեւ դարձել են գրականագիտական ուսումնասիրությունների առարկա:

Մեր որոնած աղբյուրներից կուզենայի բերել բանաստեղծի ծննդյան 80-ամյակի առթիվ 1944թ. գրված Դերենիկ Դեմիրճյանի հոդվածից մի հատված. *«Հովհաննիսյանին կարդալով զգում ես Արարատյան դաշտի հողն ու ժողովուրդը. ինչպես եւ պատմությունը… Հովհաննես Հովհաննիսյանի ուժը նրանում է, որ նա չի հանձնվել գրականության պատմության՝ իբրեւ անցյալ… Նա կմնա ու կապրի իբրեւ մեծ բանաստեղծ՝ իբրեւ մշտադալար ծառ Արարատյան դաշտում»* (**Գրական թերթ, 1984.** մայիսի 18-21 (2271), էջ 1):

շարունակությունը՝ էջ 8

Վահան ՏԵՐ-ՂԱԶԱՐՅԱՆ



ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը խորը վշտով տեղեկացնում է, որ սեպտեմբերի 28-ին Երեւանում կյանքից հեռացել է գրող, ազատամարտիկ, սցենարիստ, անձավախույզ, լեռնագնաց **Վահան ՏԵՐ-ՂԱԶԱՐՅԱՆԸ**:

Վահան Տեր-Ղազարյանը ծնվել է 1950 թվականի հուլիսի 26-ին Երեւանում: Սովորել է Մոսկվայի Գորկու անվան գրականության ինստիտուտում: Մասնակցել է Արցախյան առաջին ազատամարտին:

Հրատարակել է մի շարք գրքեր՝ *«Փնտրողների արշավանքը»*, *«Արքայադրամը»* վեպերը: Վերջինը Կանադայում արժանացել է Համազգային կրթամշակութային հաստատության մրցանակի:

2021 թվականին *«Էդիթ Պրինտ»* հրատարակչությունը լույս է ընծայել Վահան Տեր-Ղազարյանի *«Տիպանգո»* ժողովածուն, որտեղ տեղ են գտել համանուն վիպակն ու պատմվածքներ: Հեղինակել է նաեւ հեքիաթներ (*«Լուսնի հեքիաթները»*, *«Թաց ու Չորի եւ նրա որդիների զարմանահրաշ արկածները մեր օրերում»* երեքհատորյակը), թատերգություններ (*«Լեւոն Հայկազն»*, *«Ազատության զանգը»*, *«Անապատ»*): Էստոնիայի եւ Կրակովի օպերային թատրոններում բեմադրվել են *«Ադամամութ»* օպերան, որի լիբրետոյի հեղինակն է: Աշխատել է *«Սովետական գրող»* հրատարակչությունում, բազմաթիվ գրքերի խմբագիր է:

Վահան Տեր-Ղազարյանի ստեղծագործությունները թարգմանվել են ռուսերեն, լիտվերեն, ֆրանսերեն, լեհերեն, բազմիցս հրատարակվել հայաստանյան եւ արտասահմանյան գրական մամուլում: Մոտ 40 գիտահանրամատչելի եւ վավերագրական ֆիլմերի սցենարների հեղինակ է (*«Արեւի տաճար»*, *«Հայաստան»*, *«Արցախ»*, *«Թիրախ»*, *«Հայոց պատմություն»* ֆիլմաշար (12 ֆիլմ), *«Հայրենիքս՝ Հայաստան»* ֆիլմաշար (10 ֆիլմ) եւ այլն:

Նրա թարգմանությամբ Հակոբ Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում, Պատանի հանդիսատեսի թատրոնում, Վանաձորի Հովհաննես Աբեղյանի անվան դրամատիկական թատրոնում բեմադրվել են Շոթա Ռոկվայի *«Իմ գյուղը գետի այն ափին է»* վրացական, Վիկտոր Էստիմիուի *«Մահ տեսած մարդը»* ռումինական թատերգությունները:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը ցավակցում է Վահան Տեր-Ղազարյանի ընտանիքի անդամներին, հարազատներին ու գործընկերներին:

Գուրգեն ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը խորը վշտով հայտնում է, որ 83 տարեկան հասակում կյանքից հեռացել է վաստակաշատ երաժիշտ, մանկավարժ, Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր **Գուրգեն (Զոնիկ) Ավագի Սարգսյանը:**

Անգնահատելի է Գուրգեն Սարգսյանի ավանդը հայ փողային կատարողական արվեստում: Ավելի քան երեք տասնամյակ (1968-2001) երաժիշտը եղել է Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի առաջատար շեփորահարը, բազմաթիվ ելույթներ է ունեցել որպես մենակատար եւ անսամբլային կատարող, բազմաթիվ ֆոնդային ձայնագրություններ ունի ՀՀ Հանրային ռադիոյի ֆոնդում: Սակայն, երաժշտի կարեւորագույն առաքելությունը մանկավարժական գործունեությունն էր: 1985 թվականից Գ. Սարգսյանը, դասավանդելով Ալ. Սպենդիարյանի անվան երաժշտական դպրոցում, դաստիարակել է պատանի շեփորահարների մի քանի սերունդ՝ մանկավարժի բացառիկ ձիրքով նրանցից յուրաքանչյուրի մեջ սերմանելով անմնացորդ սեր եւ նվիրվածություն ընտրած մասնագիտության հանդեպ:

Գուրգեն Սարգսյանը ծնվել է 1938 թ., Գյումրի քաղաքում: Սովորել է թիվ 16 միջնակարգ դպրոցում եւ երաժշտական դպրոցի փողային բաժնում: 1958 թ.-ին ավարտել է Գյումրու Ք. Կարա-Մուրզայի անվան երաժշտական ուսումնարանի փողային բաժինը: Այնուհետեւ ծառայել է խորհրդային բանակում՝ Անդրկովկասյան ցուցադրական փողային նվագախմբում: 1968 թ. ավարտել է Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի փողային բաժինը՝ որպես մենակատար-շեփորահար:

1998 թվականից Գ. Սարգսյանը դասավանդում էր Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում: Հեղինակ է 1-7-րդ դասարանների աշակերտների համար շեփորի դասագրքի:

Վաստակաշատ մանկավարժի սաներից շատերն այսօր հանրապետության տարբեր նվագախմբերի առաջատար շեփորահարներն են, բազմաթիվ հանրապետական եւ միջազգային մրցույթների հաղթողներ եւ մրցանակակիրներ են՝ բարձր պահելով իրենց ուսուցչից ստացած մասնագիտական պատգամներն ու կատարողական հմտությունները:

Հայ երաժշտակատարողական արվեստում ունեցած մեծ վաստակի եւ տաղանդաշատ երիտասարդների մի քանի սերնդի դաստիարակման գործում ունեցած անգնահատելի ավանդի համար Գուրգեն Սարգսյանը պարգեւատրվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարության պատվոգրերով եւ *«Գրիգոր Նարեկացի»* մեդալով:

ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը իր խորին վշտակցությունն է հայտնում Գուրգեն Սարգսյանի ընտանիքին, հարազատներին, գործընկերներին եւ սաներին:

Գրականագիտական

Ցնորական Տերյանը

սկիզբը՝ «Կրթություն», հ. 32

է. *«Թեթեւ էր արվեստն իմ խնդում»*

Աշխարհի կենտրոնում՝ ի՛ր աշխարհի, բանաստեղծն է, որի մի կողմում այսկողմնային իրականությունն է, որ տանում է դեպի կյանք, լույս ու արեւ, մյուս կողմում՝ այնկողմնային եզերքը՝ անդինը, որ տանում է դեպ մահվան հովիտ: Բանաստեղծը խոսում է եւ՛ այս աշխարհի հետ, եւ՛ այն: Նա խոսում է լուռ, բայց բոլորը նրան լսում են ու հասկանում, թե ինչ է ասում:

Տերյանը հասկացված է այնքանով, որքանով հրապարակված է եւ գրականագի-տությունն իր բացահայտումներն արել է: Այլ բան, որ ժամանակը նոր մոտեցումներ է թելադրում: Բայց այս դեպքում եւս պետք է ծանոթ լինել տերյանագիտության հարյուրամյա պատմությանը, որ անպայման ունի իր նվաճումները:

Տերյանի թախիծը *«մռայլ»* չէ, դա լուսավոր, պայծառ թախիծ է եւ արցունք-անձրեւ-ների միջից երեւում է նրա ջինջ հայացքը: Մերժված սիրո, իմաստազուրկ կյանքի, եղեռ-նազարկ ժողովրդի ազգային ցավի թախիծն է, որ թեեւ վերածվում է եղերերգության, բայց ո՛չ ողբի, էլեգիկ է, բայց ո՛չ տրագիկ: Թախիծի վերածված եւ կայուն հոգեվիճակ դարձած հարակա մի տրամադրություն է սա է, որ գալիս է ոչ միայն սիրո անհասանելիությունից, այլեւ անորոշության բազմախորշ, բազմանդունդ տագնապներից:

Տերյանի թախիծը նաեւ բանաստեղծական խորհրդանշան է, ինչպես ընկնող դեղին տերեւը, միալար անձրեւը, որոնք պայմանավորված են հերոսի ապրումներով ու հոգեվիճակներով: Այստեղ խորքից իր ոստայնն է հյուսում խորհրդապաշտության գեղագիտությունը եւ ձեւավորում ինքնարտահայտման ձայնակարգությունը:

Տերյանի թախիծն ամենեւին էլ կենսապայմանների արձագանք չէ: Տերյանը հեռու էր այդ սոցիալական ազդակներից: Իսկ ինչ վերաբերում է նրա կենսապայմաններին, ապա Տերյանն ամենեւին էլ լավ չի ապրել, ինչպես նշում եք: Միշտ դրամի պահանջ է ունեցել, երբեմն հայտնվել է ծայրահեղ ծանր վիճակներում: Նյութական օգնության են հասել մոտիկ ընկերները: Այդ մասին բազմաթիվ ակնարկներ կան նրա նամակներում: Հիվանդությունը եւս կապ չունի նրա թախիծի հետ: Այդ Դուրյանն էր, որ *«Տրտունջք»*-ով ժայթքեց իր ցավը: Այդ Մեծարենցն էր, որ Արեւին աղոթք էր ուղղում. *«Շողա՛, շողա՛, բարի արեւ, հիվանդ եմ»:* Ասես արեւապաշտ հեթանոս քուրմ լինի:

Ուրեմն Տերյանի թախիծի հիմքը ո՛չ նյութական վիճակից էր, ո՛չ առողջական, այլ հոգեբանական:

Թախիծն այն հոգեվիճակի արտահայտությունն է, որի մեջ գտնվում է նրա քնարական հերոսը, այսինքն՝ ինքը այդ ներկայությամբ: Թախիծը մշտական ուղեկից է՝ առաջին բանաստեղծություններից մինչեւ հաջորդական շարքերը, այդ թվում նաեւ *«Գիշեր եւ հուշեր»*-ը: իշերային հուշերն արդյոք ի՞նչ կարող են արթնացնել բանաստեղծի հոգում, եթե ոչ թախիծն իմաստավորող կորուստի ցավ, ափսոսանքի զգացողություն, անդառնալիություն, մահվան մերձավորություն: Անհասանելիությունը նրան մատնում է հոգեկան անհուսության, անհուսությունը՝ դատապարտվածության, դատապարտվածությունն՝ անելանելիության, ինչն էլ հասցնում է հոգեկան ճգնաժամի եւ արտահայտվում թախիծի ձեւով: Ընդ որում՝ թախիծն այդ վիճակի արտահայտության ամենամեղմ ձեւն է, հակադարձ եզրը մահն է:

Հիմա, սիրո առարկա ասելով, ի՞նչ ենք հասկանում, եւ

Տերյանի անհասանելիությունն արդյո՞ք միայն դրանով է պայմանավորված: Կնոջ եւ սիրո խորհրդանշանը, անտարակույս, շատ ավելին է, քան բուն քնարական խորհրդանշաններն են թելադրում: Այդտեղ, ընդհանրապես, մարդկային մեծ երազանքների անհասանելիությունն է, մեծ հույսերի անիրականանալիությունը: Այդտեղ խորքում Նարեկացու աղոթքն է՝ Աստծուն ձգտելու երանությամբ եւ չհասնելու ողբասացությամբ: Այդտեղ մարդկային կյանքի անդառնալի դատապարտվածությունն է: Եվ դա՝ կնոջ կերպարանքով ու սիրո արտահայտությամբ, որ այլ կերպ նաեւ ասվում է՝ Աստված սեր է:

Ի՞նչ է կատարվում՝ սերն աստվածացվում է, Աստված դառնում է Սեր: Եվ քանի որ այդ սերը պիտի մարմին ունենա, ուստի մարմնավորվում է անհասանելի Ցնորք Աղջկա կերպարանքով:

Տերյանի թախիծը, ինչպես ասացի, գաղափարապաշտների համաշխարհային վշտի շարունակությունն է: Եվ ամենեւին պատահական չէ, որ *«Մթնշաղի անուրջներ»*-ն սկսվում է *«Տխրություն»* վերնագրված բանաստեղծությամբ: Տխրության պատճառն անուրջ կույսի շշունջն է, նիրհող դաշտերին կարծես թե ասած սիրո խոսքը, որ դառնում է սուրբ շշուկ եւ լցնում նրա սիրտը:

Տխրությունը դանդաղ խորանում է՝ վերածվում ցավի անմխիթար մորմոքի, դառնալով դաշտերին, անձրեւին ու քամուն խառնված *«Մահացողի տխուր կյանք... // Սրտակտուր հեկեկանք»,* համատարած վհատություն:

Թախիծը միշտ խաղաղ է՝ անուրջի է նման, որ սիրտը լցնում է անցած օրերի կարոտով, ուր մեծ կորուստն է՝ Սուրբ Կույսը, որից սոսկ շշունջ է մնացել: Տերյանի համար օրհնյալ է ոչ միայն այդ աստվածային սերը, այլեւ այդ սիրո ցնորքը, սիրո պատճառած ցավը: Իսկ հանդիպումը եղել է հպանցիկ, ընդամենը տեսնելու չափ: Մի՞թե այդպես չտեսավ Հովսեփը Մարիամին, ով իրենն էր, իր կինն էր եւ իրենը չէր: աղափարաբանական հիշողության կոդը մարմնավորվում է վերափոխված ձեւով:

Աստծուն մեկ անգամ են տեսել: Հրեղեն լույսի պես եկել է ու անցել եւ վերածվել պաշտամունքի: Նույնը Տերյանի Սուրբ Կույսը, որպես ճանապարհի խորհրդանշան:

Որտեղի՞ց Տերյանի մեջ այդ հուսահատ թախիծը: Նախ՝ ի՛ր վկայությունները:

շարունակությունը՝ էջ 9

Էջմիածնի կենտրոնական գրադարանը 100 տարեկան է

սկիզբը՝ էջ 7

Պետք է ավելացնել, որ Հովհաննես Հովհաննիսյանը ապրում է նաեւ իր անունը կրող ներկայիս գրադարանով, գրադարանավարների ու գրադարանից օգտվողների հիշողությունների մեջ, ինչպես նաեւ՝ 1948թ.-ից էջմիածնում գործող նրա անվամբ թանգարանով, որտեղ երկար տարիներ ապրել ու ստեղծագործել է բանաստեղծը: Հիշենք նաեւ, որ դեռ 1913-ին նշվել է Հովի. Հովհաննիսյանի գրական գործունեության 25 -ամյակը, իսկ 1965-ին՝ նրա ծննդյան 100-ամյակը:

Այսպիսով, էջմիածնի Հովհաննես Հովհաննիսյանի անվան քաղաքային գրադարանը 100 տարեկան է, որը բովանդակային հարուստ գործունեությամբ եւ ակնառու ցուցանիշներով, զարգացման առանձնահատկություններով ու ռազմավարությամբ սերունդների միջեւ մշտապես եղել է կամուրջ: 100 տարի անց՝ այսօր էլ գրադարանագիտության մեջ եւ գրադարանային գործի կազմակերպման հիմքում չեն կորցրել իրենց արդիականությունը *«գրադարանի վարիչ»*, *«գրադարանապետ»*, *«գրադարան-ընթերցարան»*, *«գիրք»*, *«գրացուցակ»*, *«ընթերցող»* եւ *«ընթերցանություն»* հասկացությունները, որոնց 1920-ական թվականներին կարեւոր նշանակություն է տվել նաեւ Հովհաննես Հովհաննիսյանը:

Պատմական եւ գրադարանային-տեղեկատվական աղբյուրների վերլուծությունից կարելի է եզրակացնել, որ ժամանակակից հասարակության ինֆորմատացման գործում ներկա գրադարանը ցուցաբեր(ել)ում է տեղեկատվա-հաղորդակցական կենդանի կապ՝ հանդիսանալով մշակութային քաղաքականության, կրթադաստիարակչական, սպասարկման եւ տեխնոլոգիական գործընթացների շարժիչ ուժերից մեկը: Այդ տեսանկյուններից էլ անգնահատելի է դարակազմիկ գրադարանի տեղն ու պատմա-հասարակական դերը հայկական գրադարանների համակարգում՝ Հայաստանում, Արցախում եւ Սփյուռքում: Բոլոր գրադարանները պետք է ակտիվորեն շարունակեն իրենց առաքելությունը՝ որպես անձերի տեղեկատվական մշակույթի ձեւավորման ու զարգացման կենտրոնների:

Մշակութային այս կարեւոր իրադարձության առթիվ ջերմորեն շնորհավորում եմ էջմիածնի Հովհաննես Հովհաննիսյանի անվան կենտրոնական գրադարանի կոլեկտիվին, մաղթում եմ բոլորին առողջություն,աշխատանքային- մասնագիտական հաջողություններ եւ ապագային միտված նորանոր ձեռքբերումներ:

Գագիկ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ
Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ցնորական Տերյանը

սկիզբը՝ էջ 8

1905 թվականից Տերյանին պաշարած ապրումներն արտահայտվել են ոչ միայն բանաստեղծությունների մեջ, այլեւ նամակների: Նա շատ է գրում «սոսկալի ձանձրույթի» մասին, ինչը հասցնում է անգամ խելագարության եւ ինքնասպանության գաղափարի. *«Իմ օրերը <...> հոսում են վերին աստիճանի միապաղաղ ու ձանձրալի»:* Հաճախակի են դժգոհությունները տրամադրության անկումից, որից փրկությունը աղջիկների միջավայրն է: Տրամադրությունը եղել է *«անորոշ»:*

Մշտական մենության տագնապներ. *«Եվ թախի՜ծը... հենց որ իջնում է ուշ աղջամուղջը, գյուղը լռում է, իջնում է իրոք գերեզմանային լռություն, որը երբեմնակի խախտվում է միայն շների հաչոցով: Թվում է, թե գերեզմանատանն ես ապրում: Ահա հենց այդ ժամանակ է, որ անտանելի ծանր է լինում եւ հոգիդ պարուրում է ճմլող, կուրծքդ ցավելու աստիճան սեղմող թախիծը: Եվ թվում է՝ գիշերը վերջ չունի: Լույսի, որեւէ ձայնի, թեկուզ հաչոցի խելահեղ տենչը համակում է քեզ: Սկսում ես խոսել ինքդ քեզ հետ եւ վախենում ես սեփական ձայնից: Թախի՜ծ: Անդրշիրիմյան լռությո՜ւն: Անվախճա՜ն գիշեր...»:* Եվ խնդրանքը *«անողոք ճակատագրից». «այն է, մենակ չմնալ եւ մտերիմ ընկեր ունենալ»* (29. 08.1907, անձա):

Եվ նորից ճնշող մենություն, սպանիչ թախիծ, խորին տխրություն, տանջալիորեն երկարատեւ, տեւական մելամաղձություն, նորից ու նորից *«սոսկալի թախիծ», «Ամեն, ամեն ինչից ձանձրացել եմ», «անսահման տխրություն»* հատկապես տոն օրերին, ինչն ի վերջո հասցնում է *«ապատիայի»՝ «մեռյալ անտարբերության»* ամեն ինչի հանդեպ: *«Ես հեռանում եմ տնից՝ «ուր կուզե լինի, միայն թե հեռու»: Սարսափելի էր մենակ մնալը: Ես փախչում էի առանձնությունից ու մենությունից, որոնք այնպես սիրում եմ տրտմության րոպեներին: Դա սարսափելի Թախիծ էր: Դուք հասկանո՞ւմ եք, ինչ բան է Թախիծը: Անառիթ, անել, խոր, իսկական ցավ է պատճառում: Ամենուր նա է, հասկանո՞ւմ եք, նա ամենուր է՝ իմ մեջ, իմ շուրջը, իմ վերեւ, ամենուր»* (III, 279):

Իրեն համարում է *«ամաչկոտ»* մարդ, ըստ ընկերների՝ բռնկվող ու ջղային էր: Երջանիկ պահերին նրան պատում է *«լուսավոր հեզություն ու խաղաղ տխրություն»,* լուսավոր դաշտերի, աննպատակ թափառումների կարոտ: Այս ամենը հենց ինքը՝ Տերյանը, համարում է դարի՝ դարաշրջանի հիվանդություն, որ բնականորեն առավել զգում էին նուրբ, քնքուշ հոգիները: Դրա հիմքում շրջապատից չհասկացվածությունն է, միջավայրի կոպտությունը, բարքերի գռեհկությունը, ինչին հաջորդում է օտարումը, հեռացումը, ներքին խռով-քը, մարդը դառնում է մի տեսակ իր տեղը կորցրածի նման:

Դարի հիվանդությունն սկսվել էր առաջին գաղափարապաշտներից, այսինքն՝ ռոմանտիկներից՝ Բայրոնից, Շելլիից, Հյուգոյից... Դարի հիվանդությամբ էր տառապում Լերմոնտովի *«Մեր ժամանակի հերոսը»՝* Պեչորինը: Հիմա դարի հիվանդությունը փոխանցվել էր խորհրդապաշտներին, ովքեր շատ ընդհանրություններ ունեին գաղափարապաշտների հետ, եւ համակել էր դարասկզբի երիտասարդությանը:

Հիմա մեջ կբերեմ նամակներից մի հատված, որ ասես բանաստեղծության նոթագրություն լինի.

Մի տեսակ քարացել է հոգիս: Սառել է:
Անկամ ու հոգնած:
արունն այստեղ աշնան պես է:
Անձրեւ ու անձրեւ:
Տխրություն:
Մենակություն: Մշտապես:
Մենք բոլորս այդպես ենք: Տա՛ աստված, որ ուժգին սիրեք, ում որ սիրում եք:
Սիրուց լավ բան չկա (III, 319):

Ահա այս անելանելի կացության մեջ է, որ արվեստը դառնում է փրկության հույս, որովհետեւ նուրբ է, կատարյալ է, սրտամոտ է ու հոգեպարար: Քո՞նն է, դո՞ւ ես: Այս զգացողությունն արմատավորվել է նրա մեջ, եւ նա անպակաս է եղել երաժշտական դահլիճներից, համերգներից: Նրա օտարված հոգին ասես վերամարմնավորվել է երաժշտության մեջ: Երաժշտությունը դարձել է պոեզիա: *«Երաժշտությունը իմ հոգին է, որին ինչ-որ հրաշքով ես լսում եմ: Իսկ եթե երաժշտության մեջ ես չեմ լսում իմ հոգին, նշանակում է, որ դա արդեն երաժշտություն չէ: Ահա թե ինչու երբեմն որեւէ նշանավոր սիմֆոնիա ինձ չի հուզում, իսկ «երգեհոնիկը աշնանային եղանակին» խելքահան է անում» (IV, 50): Մեկ այլ առիթով. «Հոգիս ծայրեծայր լիքն է պոեզիայով...»* (IV, 71):

Կարծես թե կյանքը՝ դուրսը, փողոցը, մոռացնել է տալիս հոգեկան ճնշվածությունը, բայց դա անցողիկ պահ է եւ այդ պահին, ահա, ուրվագծվում է նրա հոգեբանական դիմանկարը.

Այս հին ու նոր գրքերի վրա կորացած
Չընտեսա ես, չընտեսա,
որ գարուն է նոր...
...Տես, ինչպե՜ս եմ հոգնել ես այս
գրքերից հին ու նոր,
Խոսքերից այս իմաստուն,
գիտուններից բյուր,
Ժպտա, անգի՛ն, ժըպիտըդ խոր
գրքերից խոր,
Խնդությունդ ամոքիչ,
զրույցըդ աղբյո՜ւր...
(IV, 94):

Ամենից հաճախակի հիշվում է կյանք բառը. կյանքը լուսեղեն հեքիաթ, բայց՝ *«Սուտ կյանքին խառնիր երազանքը սուտ»,* կյանքի ցավեր եւ շեշտված տողերից մեկը՝ *«Կյա՛նք, տխուր հովիտ հավիտյան լալու»:* Մխիթարանքը մշտապես ուղեկցող կյանքի *«անուշ սուտն է»,* որքան վանող, նույնքան տենչալի՝ որպես փրկություն: Հակառակը մահն է: Կյանքի եւ մահվան կարճ միացումը հոսանքահար է անում բանաստեղծին: Այս ընթացքում նաեւ խորհրդանշաններն են: Մահվան խորհրդանշաններն ամեն մի բանաստեղծության մեջ են՝ սկսած դալկահար տերեւներից, աշնան գույներից, անձրեւի միալար տխուր երգից, մեռնող օրվանից, ցուրտ մշուշներից, գագաթներին փոխարինած սիրտ մաշող անդունդներից: Երկու բեւեռները, որքան իրարից հեռու, միանում են բանաստեղծի մեջ. *«Իրար ծուլեցի իմ մեջ մահ ու կյանք. // Հոգիս մատնեցի քո մառախուղին»: «Ինձ թաղեք...»*-ին հաջորդում է պահանջը՝ *«Իմ գերեզմանին դուք չմոտենաք»,* հարկավոր չէ ինձ ոչինչ՝ ո՛չ հիշատակ, ո՛չ ծաղիկ, ո՛չ խոսք, այլ միայն՝ մոռացո՜ւմ: Բանաստեղծի հոգին հիվանդ է սիրո անբուժելի ցավով, սա դեռ նրան ախտահարած հիվանդությունը չէ, այլ հոգու մորմոքն է: Եվ ելքը՝ *«Ինձ թաղեք, երբ կարմիր վերջալույսն է մարում», «Ինձ թաղեք, երբ տխուր մթնշաղն է իջնում»:*

Բայց ինչո՞ւ թաղել, երբ դեռ պետք է ապրել: Մահն այս դեպքում ոչ թե սոսկ մարդու բնական վերջն է, այլ քնարական հերոսի վրեժի ձեւը կյանքից, ավելի ստույգ՝ կյանքի անլիարժեքությունից, որ արտահայտվում է իր բախտից երես թեքելով: Այս ի՜նչ քստմնելի իրականություն է, մի՞թե արժե, որ դրա համար մարդը կառչի կյանքից: Մի՞թե գորշ, անարեւ, անհեռանկար կյանքի համար արժե մարտնչել: Դուրյանի *«Տրտունջք»*-ի տողն է արթնանում. *«Աստուծո ծաղրն է աշխարհն ալ արդեն...»:* Ծաղրված է մարդը, ծաղրված է ճակատագիրը, ծաղրուծանակ է ողջ իրականությունը եւ առաջին հերթին հայրենիքը՝ պարտված, ամոթահար, անկյալ:

Տերյանը ետ է վերադարձնում իրեն տրվածը, որպեսզի ստեղծի իրենը՝ իրեն վերագտնի կյանքի ի՛ր պատկերացումների մեջ: Տերյանն Աստծու հետ հաշտ է, նրա թշնամին գորշ, մահացու իրականությունն է, որ խարտոցի պես տաշում, մաշում է կյանքը: Ուրեմն՝ էլ ո՞ւմ է պետք այդ կյանքը, երբ կա տեսիլքը, ցնորքը, երազը, պատրանքը, այնկողմնայինը... Ա՜յլը... Անիրականն ավելին է, քան իրականը: Ուրեմն ավելորդ է նաեւ այդ իրականության մեջ ապրած, վատնած կյանքը:

Սա նրան տանում է դեպի հոգու անդունդները, սա կործանում է նրան եւ կործանում է գիտակցաբար, որովհետեւ առջեւում հարության հո՛ւյսն էր, նոր արշալույսի լո՛ւյսն էր, փողոցի աղջկան փոխարինած եթերային սուրբ կո՛ւյսն էր... Ահա այդ անդնդախոր պահերին աստիճանաբար ուժգնանում է կարոտը: Ականջն անընդհատ ձայնի է. *«Թվաց թե մեկը կանչում է տրտում...»,* բայց ընդամենը գիշերվա հովն է դաշտերում լալիս եւ *«մենակությունն է քարի պես լռում...»:*

Այս ընթացքում անվերջ են կերպարանափոխությունները: Եթե մահվան սահմանագիծը կա, այլեւս ոչինչ նրան չի կարող խանգարել դառնալու մե՛կ լուսնոտ՝ *«Ես մի լուս-նահա՛ր, ես մի խենթ լուսնո՛տ, // Դու ցո՛լք, դու ցնորք, հավիտյան խաբող...»,* մե՛կ *«մենավոր ու մոլոր մի նավակ»,* մոլորյալ ասուպ, անձրեւող արցունք: Տերյանը տեսնում է ուրվականների աշխարհը, նրա աչքի առաջ կյանքը դառնում է դեղին զառանցանք, կարմիր մղձավանջ, կապույտ իրիկնամութ, սեւ ստվեր. անհաստատ, անորոշ ուղին նրան կանգնեցնում է գիշերվա մութ ու անթափանց ջրերի առջեւ՝ *«Սասանում եմ ես ջրերի ահից»* եւ հետո.

Շողում են, դողում աղմուկով զվարթ,
Անխոս քարանում ու նորից խաղում,
Անդունդից ելնում, դեմքիս ծիծաղում,
Խուլ շառաչում են, լարում են թակարդ...

Կարծես մոտենում է հոգեկան անհավասարակշռության այն պահը, երբ սարերում լոռեցի Սաքոն միայնակ խելագարվեց: Հիմա միայնակությունը տեղափոխվել է քաղաք, իսկ խելագարության պահը նույնն է: Հաջորդում է փրկության *«Աղոթք»*-ը. կյանքի ու մահի պայքարը դառնում է լույսի ու խավարի պայքար՝ խավարի մեջ ի՛նքն է, լույսերի մեջ՝ նա՜: Սառած հեկեկանք, սեւ օրեր, անհուն խավար եւ մահ, որ մոտենում է ու հեռանում, որ խաղում է բանաստեղծի հետ՝ տանում է ու բերում, ծաղրում ու ստիպում հայացքը հառել լույսի աղբյուրին, որ վերստին սերն է՝ կնոջ տեսք առած: Միայն ու միմիայն սերը՝ միա՛կը, անփոխարինելի՛ն, անհասանելի՛ն, աստվածայի՛նը, բայց նաեւ անբացատրելի՜ն... Իրականության հետ բախումը խաղաղվում է, տեսիլքը վերադառնում է իրական կյանք եւ բանաստեղծը *«Դարձ»* է ապրում.

Մի օր առհավետ կյանքս կանիծեմ
Եվ գունատ հույսի քայլերով տարտամ
Կրգտնեմ ուղին հեռավոր քո տան
Ու թույլ ձեռներով դուռդ կծեծեմ...

Մխիթարանքն արդեն քրոջական սերն է, այսինքն՝ հարազատությունը, գութը, կարեկցանքը եւ արցունքը... Կնոջ սերը՝ ոչ թե որպես էգի սեր, ոչ թե ցանկասիրություն, կիրք, հեշտանք, տարփանք, խոնջանք ու վայելք, այլ որպես հրեշտակի տեսք ստացած կնոջ քրոջական սեր՝ հարազատի գիրկ՝ ներող, տանող, համբերող, հանդուժող ու մխիթարող...

(շարունակելի)

Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ
բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր

Լեւոն ԱԹՈՅԱՆՑ



ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը խորը վշտով տեղեկացնում է, որ 91 տարեկան հասակում կյանքից հեռացել է հայկական կինոյի վաստակաշատ եւ հեղինակավոր կինոօպերատոր **Լեւոն ԱԹՈՅԱՆՑը**:

Վարպետն իր բացառիկ համեստությամբ եւ պրոֆեսիոնալիզմով ստեղծել է ուրույն ձեռագիր հայ կինոյում՝ լինելով անփոխարինելի գործընկեր եւ ուսուցիչ: Լեւոն Աթոյանցին կարելի է նույնացնել հայ կինոյի պատմության մի ամբողջ շրջանի հետ: Նրա ավանդն անփոխարինելի է հայ կինոյում: 1960-ականներին ստեղծվել է աթոյանցական կինոլեզուն՝ լի նորարարություններով ու ստեղծարարությամբ:

Ավարտելով Լենինգրադի կինոճարտարագետների ինստիտուտը՝ Աթոյանցը վերադարձել է հայրենիք եւ որպես կինոօպերատոր աշխատել է *«Հայֆիլմ»* կինոստուդիայում՝ նկարահանելով ավելի քան 30 խաղարկային եւ վավերագրական ֆիլմեր՝ համագործակցելով հայ կինոյի վարպետներ Արման Մանարյանի, Դմիտրի Կեսայանցի, Ալբերտ Մկրտչյանի, Լաերտ Վաղարշյանի եւ այլոց հետ:

1994 թ. Լեւոն Աթոյանցը մեկնել է Արցախ՝ դառնալով նաեւ Արցախյան պատերազմի վավերագրողներից մեկը:

Կինոօպերատորի բարձր էսթետիկան, կադրի կոմպոզիցիայի եւ դրամատուրգիայի հանդեպ այլընտրանքային մոտեցումները դարձան ժողովրդական ժառանգություն, կինոօպերատորության դասական դպրոց եւ դաստիարակեցին մի քանի սերունդներ:

Մասնագիտական գործունեությանը համընթաց Լեւոն Աթոյանցը դասավանդել է Հեռուստատեսության եւ ռադիոյի ակադեմիայում, Ռուս-հայկական սլավոնական համալսարանում (այժմ՝ Հայ-Ռուսական համալսարան), Երեւանի թատրոնի եւ կինոյի պետական ինստիտուտում՝ փոխանցելով իր մասնագիտական փորձը երիտասարդ կինոօպերատորներին եւ նպաստելով սերունդների մասնագիտական կրթմանն ու կայացմանը:

Խորհրդային եւ հայ կինոյի ականավոր կինոօպերատոր եւ մանկավարժ Լեւոն Աթոյանցը պարգեւատրվել է «Հայրենիքին մատուցած ծառայությունների համարե 1-ին աստիճանի շքանշանով, արժանացել է *«Հրաշալի կինո ԽՍՀՄ»* մեդալի, պարգեւատրվել է *«Գրիգոր Նարեկացի»* մեդալով, 2016 թվականին արժանացել է *«SALENTO CINEMA»* միջազգային կինոփառատոնի մրցանակին՝ համաշխարհային կինոյում ունեցած ներդրման համար, 2018 թվականին պարգեւատրվել է Երեւանի քաղաքապետի ոսկե մեդալով՝ հայկական կինոյի ոսկե ֆոնդի ներդրման եւ զարգացման համար:

Կինոակադեմիկոս Լեւոն Աթոյանցն անդամակցում էր մի շարք մասնագիտական կառույցների (Հայաստանի կինեմատոգրաֆիստների միություն, Մշակույթի գործիչների համահայկական լիգա, Հայկական ազգային կինոակադեմիա եւ այլն):

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը ցավակցում է Լեւոն Աթոյանցի ընտանիքի անդամներին, հարազատներին, նրա արվեստի հավատավորներին:

Հայտարարություն

Գյումրու հ. 4 արհեստագործական պետական ուսումնարանը հայտարարում է մրցույթ՝ հետեւյալ թափուր տեղերի համար.

- «Վերականգնվող էներգիայի էներգետիկ կայանների մոնտաժում, նորոգում եւ սպասարկում» մասնագիտության գծով արտադրական ուսուցման վարպետ, համատեղությամբ մասնագիտական մոդուլներ դասավանդող (աշխատանքային ծանրաբեռնվածությունը 2021-2022 ուսումնական տարում՝ 1 դրույք վարպետ, մասնագիտական մոդուլների դասավանդում՝ շաբաթական 3 դասաժամ)

- «Գեղանկարչություն եւ քանդակագործություն» մասնագիտության գծով արտադրական ուսուցման վարպետ, համատեղությամբ մասնագիտական մոդուլներ դասավանդող (աշխատանքային ծանրաբեռնվածությունը 2021-2022 ուսումնական տարում՝ 0,5 դրույք վարպետ, մասնագիտական մոդուլների դասավանդում՝ շաբաթական 2 դասաժամ)

Թափուր տեղերի համապատասխանության նկատմամբ սահմանված պահանջներն են՝ տվյալ մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքի փորձ եւ միջին կամ բարձրագույն համապատասխան մասնագիտական կրթություն, կամ տվյալ մասնագիտական գբաղվածության բնագավառում աշխատանքային գործունեության փորձ, եթե տվյալ դասընթացի ուղղությամբ միջին կամ բարձրագույն կրթություն չի իրականացվում:

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետեւյալ փաստաթղթերը՝

1) դիմում (Ձեւ 1),

2) կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը եւ պատճենը),

3) անձնագիր (բնօրինակը եւ պատճենը),

4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),

5) ինքնակենսագրություն (Ձեւ 4),

6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի,

7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների,

8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինվորական գրքույկ (բնօրինակը եւ պատճենը),

9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Փաստաթղթերն ընդունվում են ***սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչեւ հոկտեմբերի 19-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***հոկտեմբերի 22-ին, ժամը 14-00-ին,*** *«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան»* ՊՈԱԿ-ում, հասցեն՝ Ք. Գյումրի, Անի թաղամաս, 11 փողոց, 5/2 շենք:

Տեղեկությունների համար զանգահարել (0312) 6-64-08 հեռախոսահամարով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ ԿԳՄՍՆ *«Երեւանի հ. 8 արհեստագործական պետական ուսումնարան»* ՊՈԱԿ-ի *«Հայոց լեզու եւ խոսքի մշակույթ»* առարկայի դասախոսի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել.

- դիմում (Ձեւ 1),

-բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը եւ պատճենը),

- անձնագիր (բնօրինակը եւ պատճենը),

- աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Ձեւ 4),

- մեկ լուսանկար՝ 3x4 չափի,

- այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները ՝ նաեւ զինվորական գրքույկ (բնօրինակը եւ պատճենը),

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում):

Փաստաթղթերն ընդունվում են ***մինչեւ հոկտեմբերի 19–ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:30-16:00, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***հոկտեմբերի 22-ին՝ ժամը 12:00-ին,*** Երեւանի հ8 արհեստագործական պետական ուսումնարանում. հասցեն՝ ք. Երեւան, Վ.Ավանեսովի 1:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (010) 47-17-31, (010) 47-17-32, (077) 38-07-02, (099) 34-56-44:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ *«Մասիսի պետական գյուղատնտեսական քոլեջ»* ՊՈԱԿ-ի դասախոսների հետեւյալ թափուր տեղերի համար.

1. *«Համակարգիչների շահագործում»* մասնագիտության (ինֆորմատիկայի եւ հարակից մասնագիտական առարկաների մասնագետ), տարվա աշխատանքային ծանրաբեռնվածությունը՝ 986 ժամ:

2. *«Օխախոտի աճեցման եւ վերամշակման տեխնոլոգիա»* մասնագիտության մասնագետ, տարվա աշխատանքային ծանրաբեռնվածությունը՝ 738 ժամ:

3. *«Պահածոների եւ սննդախտանյութերի տեխնոլոգիա»* մասնագիտության մասնագետ, տարվա աշխատանքային ծանրաբեռնվածությունը՝ 1008 ժամ:

4. *«Ջերմատնային տնտեսություն»* մասնագիտության մասնագետ, տարվա աշխատանքային ծանրաբեռնվածությունը՝ 966 ժամ:

5. *«Ֆիզիկական կուլտուրա»* առարկայի մասնագետ, տարվա աշխատանքային ծանրաբեռնվածությունը՝ 936 ժամ:

Դասախոսի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Փաստաթղթերն ընդունվում են ***սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչեւ հոկտեմբերի 19-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***հոկտեմբերի 22-ին, ժամը 14-00-ին,*** Մասիսի պետական գյուղատնտեսական քոլեջում, հասցեն՝ ք. Մասիս, 3-րդ թաղ., Հերացու 21:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ *«Երեւանի հ. 22 հիմնական դպրոց»* ՊՈԱԿ-ի դասվարի (2 մասնագետ), ֆիզիկայի (12 դասաժամ), ֆիզկուլտուրայի (18 դասաժամ), կերպարվեստի (14 դասաժամ), տեխնոլոգիայի (տղաների խումբ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Ձեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ***հոկտեմբերի 6-ից մինչեւ հոկտեմբերի 19-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***հոկտեմբերի 21-ին՝ ժամը 14:00-ին,*** Երեւանի հ. 22 հիմնական դպրոցում, հասցեն՝ ք. Երեւան, Նազարբեկյան 17:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (010) 33-11-13 հեռախոսահամարով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի *«Կապանի հ. 4 միջնակարգ դպրոց»* ՊՈԱԿ-ի ՆԶՊ-ի ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Ձեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ***հոկտեմբերի 6-ից մինչեւ հոկտեմբերի 19-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 14:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***հոկտեմբերի 25-ին՝ ժամը 13:00-ին,*** ՀՀ Սյունիքի մարզի Կապանի հ. 4 միջնակարգ դպրոցում, հասցեն՝ թաղամաս Վաչագան 155:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (094) 81-57-98 հեռախոսահամարով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Լոռու մարզի *«Գուգարքի հիմնական դպրոց»* ՊՈԱԿ-ի ՆԶՊ-ի (2 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ***հոկտեմբերի 6-ից մինչեւ հոկտեմբերի 19-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***հոկտեմբերի 21-ին՝ ժամը 14:00-ին,*** ՀՀ Լոռու մարզի Գուգարքի հիմնական դպրոցում, հասցեն՝ գ. Գուգարք, 2-րդ փ., 1-ին նրբանցք, 11 շ.:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (077) 99-41-66, (0322) 3-90-89 հեռախոսահամարներով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ *«Երեւանի Վ. Պետրոսյանի անվան հ. 51 հիմնական դպրոց»* ՊՈԱԿ-ի անգլերենի (22 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Ձեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ***մինչեւ հոկտեմբերի 7-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***հոկտեմբերի 12-ին՝ ժամը 14:30-ին,*** Երեւանի Վ. Պետրոսյանի անվան հ. 51 հիմնական դպրոցում, հասցեն՝ ք. Երեւան, Ն. Զարյան 23:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (010) 23-21-83, (010) 23-10-52 հեռախոսահամարներով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Տավուշի մարզի «*Ազատամուտի միջնակարգ դպրոց*» ՊՈԱԿ-ի ինֆորմատիկայի (8 դասաժամ), ֆիզկուլտուրայի (8 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Չեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Չեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ***հոկտեմբերի 6-ից մինչեւ հոկտեմբերի 19-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 14:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***հոկտեմբերի 21-ին՝ ժամը 14:00-ին,*** ՀՀ Տավուշի մարզի Ազատամուտի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գ. Ազատամուտ, L. Աղբալյան 2:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (077) 45-65-26 հեռախոսահամարով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ «*Երեւանի Գալինա Ստարավոյտովայի անվան հ, 177 հիմնական դպրոց*» ՊՈԱԿ-ի մաթեմատիկայի (21 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Չեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Չեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ***մինչեւ հոկտեմբերի 15-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***հոկտեմբերի 19-ին՝ ժամը 14:00-ին,*** Երեւանի Գալինա Ստարավոյտովայի անվան հ, 177 հիմնական դպրոցում, հասցեն՝ ք. Երեւան, Ավան, Դուրյան 24:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (010) 61-81-21 հեռախոսահամարով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «*Շաքիի միջնակարգ դպրոց*» ՊՈԱԿ-ի ՆԶՊ-ի (5 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Չեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Չեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ***հոկտեմբերի 6-ից մինչեւ հոկտեմբերի 19-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***հոկտեմբերի 22-ին՝ ժամը 13:00-ին,*** ՀՀ Սյունիքի մարզի Շաքիի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գ. Շաքի, փ. 8, շ. 3:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 19-75-19 հեռախոսահամարով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Վայոց ձորի մարզի «*Եղեգիսի միջնակարգ դպրոց*» ՊՈԱԿ-ի հայոց լեզվի եւ գրականության (11 դասաժամ), մաթեմատիկայի (11 դասաժամ), հասարակագիտության (8 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Չեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Չեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են ***հոկտեմբերի 6-ից մինչեւ հոկտեմբերի 19-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:***

Մրցույթը տեղի կունենա ***հոկտեմբերի 21-ին՝ ժամը 14:00-ին,*** ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիսի միջնակարգ դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (077) 07-89-66 հեռախոսահամարով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Վայոց ձորի մարզի «*Շատինի միջնակարգ դպրոց*» ՊՈԱԿ-ի բնագիտության (4 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Չեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Չեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

